

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Չիրականացան Ալիեի ծրագիրները

Արցախը հայաթափել է ետք Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևի աճապարեց նշանակելու արտահերթ ընտրություններ այն ակնկալությամբ, որ պիտի կարողանայ օրինականացնել իր վարչակարգը ու իր վրայէն հեռացնել բռնապետի պիտակը, որ յաճախ կը տրուի իրեն՝ միջազգային իրաւապաշտպան կազմակերպություններուն կողմէ:

Այս անգամ եւս Ալիև չկարողացաւ դիմանալ զայթակրութեան ու ընտրուեցաւ իրեն յատուկ 92 տոկոս եւ ակելի ձայներով, որոնց շարքին դատարկ Ստեփանակերտի մէջ «ստանալով» 6000 ձայն, թէեւ բացի նախագահական ընտանիքի անդամներէն այլ ընտրողներ չեն եղած հոն:

Չուշացաւ եւրոպացի դիտորդներու ժխտական գնահատականը ու անոնք եկան յայտարարելու, թէ ընտրությունները անցած են կրկնակի քուէարկություններով, լցօնումներով ու լրջագոյն խախտումներով: «Արտահերթ նախագահական ընտրությունները անցան սահմանափակող միջավայրին մէջ, եւ թէեւ անոնք լաւ նախապատրաստուած էին, սակայն քննադատական ձայներն ու քաղաքական այլընտրանքները հիմնականին մէջ կը բացակայէին: Ցաւօք, նախորդ առաջարկությունները՝ օրէնսդրական դաշտը ժողովրդավարական ընտրություններու միջազգային չափանիշերուն համապատասխանեցնելու վերաբերեալ, մնացին անտեսուած», ըսուած էր ԵԱՀԿ դիտորդներու գնահատականին մէջ, ակելցնելով, որ մնաց գործընթացները չեն համապատասխաներ ժողովրդավարական ընտրություններու չափանիշերուն: Միացեալ Նահանգները եւս յայտարարեց, որ կը կիսէ ԵԱՀԿ-ի դիտարկումները եւ կոչ կ'ընէ, որպէսզի Ատրպեյճան կատարէ իր միջազգային պարտաւորությունները՝ հիմնարար ազատություններուն եւ ժողովրդավարական գործընթացներուն վերաբերեալ:

Մոսկուան, որ վերջերս դարձած է Ատրպեյճանի ոչ միայն ռազմական, այլ նաեւ քաղաքական յենարանը, չուշացաւ հասնելու Պաքուի օգնութեան՝ քննադատելով ընտրություններուն վերաբերեալ բացասական գնահատականները, զանոնք նկատելով կողմնակալ:

Ծիծաղ յառաջացնող յայտարարութեամբ մը Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարությունը կը մեջբերէ ռուսաստանցի դիտորդներուն մեկնաբանություն-

ՀՀ-ն Ունի Ուժեղ Եւ Մարտունակ Բանակ Ունենալու Իրաւունք Իր Տարածքային Ամբողջականութիւնը Եւ Ինքնիշխանութիւնը Ամրապնդելու Համար. Փաշինեան

Հայաստանի կառավարութիւնը ինչպէս նախապէս ունի քաղաքական կամք՝ երթալու տարածաշրջանին մէջ խաղաղութեան, Ատրպեյճանի հետ խաղաղութեան պայմանագրի ստորագրման յայտնի պայմանաւորուածութիւններու հիման վրայ, «The Telegraph»-ին տուած հարցազրոյցին ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի ճարտարապետութիւնն ու սկզբունքները համաձայնեցուած են: Նախորդ տարեվերջին թուում էր, որ մօտ ենք վերջնական բնագրի համաձայնեցմանը, սակայն սկզբից Ատրպեյճանը հրաժարուեց մասնակցել բանակցութիւններին, ապա նշանակուեցին նախագահական ընտրութիւններ: Այս կէտի վրայ ենք այսօր», նշած է վարչապետը:

Ատրպեյճանի նախագահի Յուլիան Իլհամովի կատարած յայտարարութիւնները նիկոլ Փաշինեանը կը գնահատէ որպէս հարուած խաղաղութեան գործընթացին: Իլհամ Ալիևը վերահաստատած էր Հայաստանի տարածքով դէպի Նախիջևան միջանցքի իր պահանջը, բացառած էր Հայաստանի տարածքէն իր գործերու դուրսբերումը:

«Քանի դեռ Ատրպեյճանը չի յայտարարել մասնաւորապէս Փրակի եւ Սոչիի յայտարարութիւններէ տակից իր ստորագրութիւնը հետ վերցնելու մասին, ուրեմն շատ յստակ է, որ Հայաստանը եւ Ատրպեյճանը միմեանց տարածքային ամբողջականութիւնները ճանաչում են 1991 թուականի Ալմա-Աթայի



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Բրիտանական «The Telegraph»-ի հետ հարցազրոյցի ընթացքին

հռչակագրի հիման վրայ, եւ ցանկացած յայտարարութիւն, որը հակասում է այս տրամաբանութեանը, ապօրինի է», ըսած է ան՝ անդրադառնալով Ալիևի կողմէ՝ սահմանը խորհրդային Միութեան վերջին քարտէզով գծելու ՀՀ առաջարկի մերժման:

«The Telegraph»-ի մեկնաբան Ռոլանտ Օլիֆանթի հարցումին՝ «վախ ունի՞ք», որ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ կրնայ սկսիլ երրորդ պատերազմ, վարչապետ Փաշինեան պատասխանած է. «Վախը ճիշդ բառ է օգտագործելու համար, որովհետեւ ՀՀ-ն ժողովրդավարական, զարգացող պետութիւն է եւ իրականացնում է լայնածաւալ բարեփոխումներ, եւ միջազգային հանրութիւնը տեսաւ

վերջին տարիներին, որ մեր երկրի դիմակալուածութիւնը բարձրացել է: Ինչ վերաբերում է տարածաշրջանային ապակայունացմանը եւ դրան ուղղուած քայլերին, ի հարկէ ցանկացած բանական մարդու մօտ դա առաջացնում է մտավախութիւններ»:

Արձագանգելով հայկական բանակը գինեյու մասին Ալիևի քննադատութիւններուն՝ Հայաստանի դեկավարը ընդգծած է՝ գինուած ուժեր ունենալը իւրաքանչիւր պե-

Ազերի Կրակի Ջետեւանքով Հայկական Կողմը Ունի 4 Ձուռ Եւ 1 Վիրաւոր

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, Փետրուար 13-ի առաւօտեան Ատրպեյճանի բանակի ստորաբաժանումները հրաձգային գէնքերէ կրակ բացած են Ներքին Հանդի հատուածին մէջ տեղակայուած հայկական դիրքերուն ուղղութեամբ:

Ատրպեյճանի ՁՈՒ կրակի հետեւանքով հայկական կողմը ունի 4 զոհ եւ 1 վիրաւոր:

Ատրպեյճանական կողմը հաղորդագրութիւն տարածած է՝ ընդունելով, որ սադրանքին հեղինակը իր գինուորներն են:

ՀՀ Արտաքին գործերու նախարարութիւնը սահմանային լարուածութեան, ատրպեյճանական հերթական յարձակման հետեւանքով ստեղծուած իրավիճակին վերաբերեալ հանդէս եկած է յայտարարութեամբ՝ նշելով, որ սահմանային մագլցումներ ծաւալելու համար Ատրպեյճանը պատրուակներ կը փնտռէ:

ԳՈՅԺ

Ցաւով իմացանք մեր հաւատաւոր եւ նուիրեալ շարքայիներէն **ԸՆԿ. ԳԵՈՐԳ ԹԱՒՈՒՔԵՏԵԱՆԻ** անակնկալ մահը, որ պատահեցաւ Փետրուարի 11-ին, 2024: Հանգուցեալը եղած է ՍԴՀԿ ԱՄՆ-Արեւմտեան շրջանի Վարիչ Մարմնի անդամ: Ան օգտաշատ գործունէութիւն ունեցած է եւ նիւթաբարոյական աջակցութիւն ցուցաբերած թէ «Մասիս»-ին, Հ.Մ.Մ.-ին եւ թէ Հալէպի Կիլիկեան վարժարանին: Մեր խորագագաց ցաւակցութիւնները վշտահար այրիին՝ Մարալին, դուստրերուն եւ համայն պարագաներուն: Ցաւերժ լոյս իր յիշատակին: **ՍԴՀԿ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ**

ԼՈՒՐԵՐ

Երեւանի Աւագանին Դադրեցուց Հայկ Մարուքեանի Լիազօրութիւնները

Ձախերու 34 կողմ, 0 դէմ ու ձեռնպահ յարաբերակցութեամբ, Երեւանի աւագանին դադրեցուց ընդդիմադիր «Ազգային Առաջընթաց» խմբակցութեան անդամ, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարուքեանի լիազօրութիւնները:

«Դա ապահովեց «Հանրային Ձախ» խմբակցութիւնը: Եկաւ առաջին օրուանից ընտրեց Աւինեանին, հիմա էլ, բնականաբար, իրենց մէջ խժոժութիւն եղաւ, քանդուեցին, տեղի ունեցաւ քաղաքական անասնազորութիւն եւ հիմա հղ առիթով տեսնում էք, որ ապահովում են քվորումը», լրագրողներու հետ ձեպագրուցին ըսաւ Մարուքեան՝ յիշեցնելով, որ ամսուն 5-ին էր նիստը նախատեսուած, յետաձգուեցաւ:

«Երեւի կաթիլայինից մէկին հանել բերել են, կամ «Հանրային Ձախ»-ի վերջին բանակցութիւններն էին տանում, ես չգիտեմ՝ էնտեղ փող է, վախեցնել է, խոստումներ են», ըսաւ Մարուքեան:

Երեւանի նախկին քաղաքապետը, լրագրողներու հետ ձեպագրուցին ընթացքին յայտարարեց, որ 2026-ին պիտի մասնակցի ընտրութիւններուն, նոր կուսակցութիւն պիտի հիմնեն, վարչապետի թեկնածուն ալ ինք պիտի ըլլայ:

Իշխանականներուն մէկ ձախ հարկաւոր էր Մարուքեանի լիազօրութիւնները աւագանին մէջ դադրեցնելու համար: Քվորումը ապահովեցին «Հանրային Ձախ» խմբակցութեան ղեկավար Վահան Աւագ-



Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարուքեան

եանը եւ Վահէ Եսայեանը՝ ներկայանալով նիստին:

Կուսակցութեան նախկին առաջնորդ Վարդան Ղուկասեանը նախօրէին յայտնած էր, որ «Հանրային Ձախ»-էն ունէ մէկը պիտի չմասնակցի աւագանիի նիստին: Աւագանը արձագանգած էր. «Մեր կուսակցութեան նախագահը Արտակ Գալստեանն է»:

Աւագանին մասնաթէն գրկեց նաեւ «Մայր Հայաստան» խմբակցութեան անդամ Նարինէ Հայրապետեանը, Սոնա Աղեկեանը, իսկ Ջարուհի Փոստանճեանն ու Գէորգ Ստեփանեանը պիտի շարունակեն իրենց գործունէութիւնը աւագանիին մէջ:

ԿԳՄՍ-էն Կը Հերքեն Դպրոցներու Մէջ «Փառքի Անկիւն»-ներու Հեռացումը

Մամուլի մէջ կը շրջանառուին տեղեկութիւններ, թէ ԿԳՄՍ նախարարութիւնը յանձնարարական ուղարկած է ՀՀ տարբեր դպրոցներու տնօրէններուն՝ կրթօճախներէն հեռացնելու արցախեան պատերազմին զոհուած հերոսներու «Փառքի անկիւն»-ները:



Civic.am-ի հետ զրոյցին ԿԳՄՍ նախարարութեան մամուլի քարտուղար Կարինէ Մանուկեանը հերքեց եւ կեղծ որակեց նման տեղեկութիւնները. «Անհեթեթութիւն է, սուտ է: Նախարարութիւնը նման շրջաբերական չի ուղարկել դպրոցներին»:

Հարցին, թէ արդեօք գիտե՞ն,

թէ ովքեր նման տեղեկատուութիւն կը շրջանառեն, Մանուկեան պատասխանեց. «Ինչ-որ շրջանակներ են, որոնք ժամանակ առ ժամանակ այս խօսակցութիւնները աշխուժացնում են: Նման խօսակցութիւններ կային նաեւ ամիսներ առաջ, ու մենք հերքել էինք»:


2023 Թուականին Հայաստանէն Սեկնածներուն Թիւը Գերազանցած Է Ժամանածներու Ցուցանիշը

Անցեալ տարուան Ցունուար-Դեկտեմբեր ամիսներուն Հայաստան մուտք գործած է տարբեր երկիրներու 4 միլիոն 764 հազար 274 քաղաքացի, իսկ հակառակ ուղղութեամբ երկրին սահմանը հատած է 4 միլիոն 793 հազար 768 մարդ: Ժամանածներէն 1 միլիոն 972 հազար 135-ը եւ մեկնածներէն 2 միլիոն 8 հազար 647-ը եղած են ՀՀ քաղաքացիներ:


զար 494-ով գերազանցած է ժամանածներու ցուցանիշը: Նոյն ժամանակահատուածին երկրէն մեկնած ՀՀ քաղաքացիներուն թիւը 36 հազար 512-ով աւելին է, քան ժամանածներունը: Նման միտում արձանագրուած է նաեւ 2022 թուականին, երբ տարբերութիւնը կազմած է 27 հազար 941: 2022-ին տարբեր երկիրներու անցագրերով Հայաստան մուտք գործած է 3 միլիոն 394 հազար 371 քաղաքացի, մեկնողներուն թիւը կազմած է 3 միլիոն 355 հազար 639 մարդ՝ համապատասխանաբար 1 միլիոն

Այդպիսի տուեալներ ներկայացուցած է ՀՀ Վիճակագրական կոմիտէն: Մեկնածներուն թիւը 29 հա-

Ազատ Արձակուած Են Անի Գէորգեանն Եւ Լիլի Սկրեանը



Անի Գէորգեան



Լիլի Սկրեան

Դատախազը փոխած է Անի Գէորգեանի եւ Լիլի Մկրեանի խափանման միջոցը. ըստ դատախազութեան, «նուազած է մեղադրեալներուն կողմէ ոչ-իրաւաչափ վարքագիծ դրսեւորելու հաւանականութիւնը»:

«Սիներճի» ընկերութեան նախկին աշխատակից, Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի եղբօր կինը՝ Անի Գէորգեանն ու «Սիներճի»-ի ներկայ աշխատակից Լիլի Մկրեանը կալանաւորուած էին Տնտեսութեան նախարարութեան ու «Սիներճի» ընկերութեան առնչուող քրէական գործով, մասնաւորապէս, յանցագործութեան օժանդակելու յօդուածով, իսկ յանցանքը, ըստ քննչականին, կատարած են տնտեսութեան նախկին փոխնախարար Անի Իսպիրեանն ու նոյն նախարարութեան եւս երեք աշխատակից, որոնք կը մեղադրուին իշխանական կամ ծառայողական լիազօրութիւնները չարաչահելու յօդուածով:

Տնտեսութեան նախարարութեան ներկայ ու նախկին աշխատա-

կիցները տնային կալանքի տակ են: Դատախազութիւնը կը յաւելնէ. «Հաշուի են առել, որ վերոնշեալ մեղադրեալները ցուցմունքներ են տուել քրէական վարոյթի համար էական նշանակութիւն ունեցող հանգամանքների վերաբերեալ, նրանց մասնակցութեամբ կատարուել են առերեսումներ, ինչի պայմաններում վարոյթի տուեալ փուլում էականօրէն նուազել է մեղադրեալներ Ա.Գ.-ի եւ Լ.Մ.-ի կողմից ոչ-իրաւաչափ վարքագիծ դրսեւորելու, ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հաւանականութիւնը: Դատախազը վարոյթն իրականացնող մարմինն յանձնարարել է մեղադրեալներ Ա.Գ.-ի եւ Լ.Մ.-ի նկատմամբ կիրառել համակցուած այլընտրանքային խափանման միջոցներ՝ գրաւ, բացակայելու արգելք եւ երաշխաւորութիւն»:

Անփոփոխ մնացած է «Սիներճի»-ի ընկերութեան հիմանդիր Աշոտ Յովհաննիսեանի նկատմամբ կիրառուած խափանման միջոցը:

Երեւանի Մէջ Պիտի Տեղադրուի Շարլ Ազնաւուրի Արձանը. Յայտարարուած Է Ցուշարձանի Նախագիծի Բաց Մրցոյթ

2024 թուականին կը լրանայ Շարլ Ազնաւուրի ծննդեան 100-ամեակը: Այդ առիթով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեանի ղլխաւորութեամբ ձեւաւորուած է յրէթեանական յանձնաժողով, որ արդէն իսկ հաստատած է միջոցառումներու ցանկը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարութիւնը եւս կը հաւաքագրէ ստեղծագործական մտայղացումներ եւ գաղափարներ, որոնք կրնան ընդգրկուիլ յրէթեանական միջոցառումներու ծրագրին մէջ:

Դիմումները պէտք է պարունակեն ծրագրի անուանումը, կազմակերպութեան անուանումը, բովանդակութեան հակիրճ նկարագրութիւնը, նախատեսուող ֆինանսաւորման չափը: Դիմումներու ընդունման վերջնաժամկետը Մարտ 22-ն է: Շարլ Ազնաւուրի 100-ամեակի յրէթեանական միջոցառումներու ծիրին մէջ, Երեւանի քաղաքապետարանը յայտարարած է յուշարձանի նախագիծի բաց մրցոյթ:

Շարլ Ազնաւուրի ստեղծուելիք յուշարձանը կը նախատեսուի տեղադրել վերջինիս անունը կրող հրապարակին վրայ («Մոսկուա» կինոթատրոնին դիմաց): Ցուշարձանի հիմնարկէքի արարողութիւնը տեղի պիտի ունենայ 2024 թուականի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն: Դիմողներէն կը պահանջուի պատրաստել արձանի մանրակերտը, մանրակերտի եռադիրք լուսանկարները եւ անհրաժեշտ դիմումնաձեւը ուղարկել համապատասխան ելեկտրոնային հասցեով եւ գալն ներկայացնել մրցոյթին: Դիմումները անանուն պիտի ներկայացուին մրցութային յանձնաժողովին, որմէ յետոյ տեղի պիտի ունենան մանրակերտերի ցուցադրութիւնը եւ զնահատումը: Յաղթող ճանչցուած դիմումի հեղինակին պիտի տրամադրուի դրամական պարգեւ, եւ մանրակերտի հիման վրայ պիտի իրականացուի յուշարձանին կառուցումը:

Իւրաքանչիւր դիմող կրնայ ներկայացնել մինչեւ 3 մանրակերտի տարբերակ:

479 հազար 798-ը եւ 1 միլիոն 507 հազար 739-ը ՀՀ անցագրով: Առաւել շատ մարդ Հայաստան ժամանած է «Ջուարթնոց» օդակայանի (2 միլիոն 537 հազար

576), Բագրատաշէնի (1 միլիոն 401 հազար 232), Բաւրայի (341 հազար 247) եւ Մեղրիի (308 հազար 690) սահմանային անցակէտերով:

ԼՈՒՐԵՐ

Միրզոյեան Եւ Պորել Զանդիպուլմին Կարելորուած Է Տարածաշրջանին Մէջ Իրավիճակի Կայունացումը



Արարատ Միրզոյեան Եւ Ժողովի Պորել Կանդիպուլմինը Պրիքստի մէջ

Պրիքստի մէջ ՀՀ-ԵՄ Գործընկերութեան Խորհուրդի նիստին ընդառաջ, Փետրուարի 13-ին, կայացած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի եւ Եւրոպական Յանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ ԱԳԱԲ բարձր ներկայացուցիչ ժողովի Պորելի առանձնագրոյցը:

Միտքեր փոխանակուած են ՀՀ-ԵՄ գործընկերութեան օրակարգային հարցերու շուրջ: Անդրադարձ կատարուած ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի իրականացման ընթացքին, Հայաստանի մէջ ժողովրդավարական զարգացումներուն, ինչպէս նաեւ վերջին շրջանին գործընկերութիւնը նոր ուղղութիւններով զարգացնելու նպատակով համատեղ իրականացուած քայլերուն ու առկայ հեռանկարներուն:

Քննարկուած են նաեւ Հարաւային Կովկասի մէջ անվտանգային

հարցեր:

Անդրադարձ կատարուած է նոյն օր առաւօտեան Ատրպէյճանի կողմէ առաւօտեան ՀՀ Սիւնիքի մարզի Ներքին Հանդ բնակավայրի շրջանին մէջ Ատրպէյճանի զինուած ուժերու հերթական սադրանքի եւ ուժի կիրառման դէպքին:

ՀՀ արտաքին գործերու նախարարը ընդգծած է, որ այս միջադէպը հերթական անգամ իր ցոյց կը դնէ այն, որ Ատրպէյճանը սահմանային մագլցումներ ծաւալելու համար պատրուակներ կը փնտռէ եւ շարունակաբար կը փորձէ վիժեցնել Հարաւային Կովկասի կայունութեամբ ու անվտանգութեամբ շահագրգիռ դերակատարներու՝ բանակցութիւնները վերսկսելու ջանքերը:

Կարելորուած է Հարաւային Կովկասի մէջ իրավիճակի ապակայունացման ուղղուած հետագայ քայլերու զսպումը:

Փութինի Երեւան Կատարելիք Այցէն Առաջ Կը Պահանջուին Հայկական Կողմի Երաշխիքները. Փետրով

Ռուսաստանը նախագահ Վլատիմիր Փութինի Հայաստան հնարաւոր այցէն առաջ պէտք է որոշակի հաւաստիացումներ ունենայ հայ գործընկերներէն ՄԲԴ-ին միանալու հետ կապուած, այդ հարցը պէտք է լուծել: Այս մասին «Ռիա Նովոսթի»-ին ըսած է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեսքով:

Փեսքովի խօսքով՝ նոր իրողութիւնը՝ կապուած միջազգային

կանոնադրութեան Հայաստանի միանալու հետ, ի հարկէ, չի կրնար չունենալ բացասական ազդեցութիւն երկկողմ յարաբերութիւններուն վրայ. «Ի հարկէ, այստեղ շատ կարեւոր է ստանալ մեր հայ գործընկերներուն որոշակի հաւաստիացումները: Այդ հարցը դեռ պէտք է լուծուի երկկողմ երկխօսութեան շրջանակին մէջ, ինչին ալ մենք տրամադրուած ենք», ըսած է Փեսքով լրագրողներուն:

Ըստ Ատրպէյճանական Կողմին՝ Հայաստանը Պաքուին Փոխանցած Է Ականապատ Դաշտերու 8 Նոր Տեղեկանատեան

Ատրպէյճանի ականազերծման պետական գործակալութեան հրապարակած տեղեկատուութեան համաձայն՝ Հայաստանը փոխանցած է Լեռնային Ղարաբաղի մէջ ականապատ դաշտերու 8 նոր տեղեկանատեան:

Կը նշուի, որ անոնք հիմնականին մէջ կ'ընդգրկեն Քարվաճառի Մուսլի լեռնաշղթայի շուրջ ինկած

տարածքները:

Յիշեցնենք՝ Յունուարի վերջը ՀՀ ԱԱԾ-ն յայտնած էր, որ Լեռնային Ղարաբաղի տարածքին գտնուող ականապատ դաշտերու մասին 8 նոր տեղեկանատեան միջնորդութեամբ աշխատանքային խորհրդակներով պիտի փոխանցուի Ատրպէյճանական կողմին:

Հայաստանը Ունի Զեւքի Զեռքերման Շատ Լուրջ Պայմանագրեր Ոչ Միայն Հնդկաստանի Ու Ֆրանսայի Հետ


Հայաստանը ունի ռազմատեխնիկական փոխհամագործակցութեան, գէնքի ձեռքբերման շատ լուրջ պայմանագրեր ոչ միայն Հնդկաստանի ու Ֆրանսայի, այլեւ ռազմատեխնիկական ոլորտին մէջ լուրջ յառաջընթաց ունեցող այլ երկիրներու հետ, «Ազատութեան» հետ գրոյցին ըսաւ Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան մշտական հարցերու յանձնաժողովի փոխնախագահ Արմէն Խաչատրեանը:

Իշխանական պատգամաւորը չակերտներ չբացաւ, սակայն ընդգծեց՝ թէեւ պատերազմէն յետոյ բաւականին ծանր վիճակ էր՝ գէնքի ձեռքբերման, ռազմատեխնիկական համագործակցութեան ոլորտին մէջ դատարկութիւն էր, բայց այս հարցը «զարմանալիօրէն կարճ ժամանակահատուածի մէջ լուծուած ստացաւ»:

«Ամէն դէպքում, մենք այսօր ունենք լուրջ պայմանագրեր ռազմատեխնիկական փոխհամագործակցութեան, գէնքի ձեռքբերման, ինչպէս արդէն յայտնի է, Հնդկաստանի, Ֆրանսայի հետ եւ պէտք է ասենք, որ մեծ տեղութիւններ հանդիսացող եւ ռազմատեխնիկական ոլորտում լուրջ յառաջընթաց ունեցող երկրներին հետ եւս ունենք պայմանագրեր: Ի հարկէ այդ մասին չենք խօսելու, չենք ասելու, բայց միայն Ֆրանսան եւ Հնդկաստանը չեն», ըսաւ իշխանական պատգամաւորը՝ շեշտելով, որ «վերջին մէկ-երկու տարուս աւելի մեծ ծաւալի աշխատանք է իրականացուել, որի արդիւնքները շատ մօտ ապագայում կը տեսնենք»:

Խաչատրեան նաեւ ընդգծեց, որ Հայաստանը Ռուսաստանի հետ ալ լուրջ ռազմատեխնիկական փոխհամագործակցութեան պայմանագրեր ունի եւ պարտաւորութիւններ կան, որ Ռուսաստանը մասամբ կատարած է, բայց դեռ պէտք է նաեւ կատարէ:

«Մենք ձեռք ենք բերում այնպիսի գինատեսակներ, որոնք կա-



Աժ Պաշտպանութեան յանձնաժողովի փոխնախագահ Արմէն Խաչատրեան

րելի է համարել գերժամանակակից՝ գոնէ չորրորդ-հինգերորդ սերնդի գէնք ենք ձեռքբերում: Մենք օգտագործած գէնք ձեռք չենք բերելու: Այսինքն՝ ուսումնասիրելով ժամանակակից պատերազմների մարտավարութիւնը՝ մենք նաեւ լուրջ վերլուծութիւններ ունենք, ինչպէս նաեւ 44-օրեայ պատերազմի դառն փորձից ելնելով, մենք արդէն գիտենք, թէ ինչպիսի գինատեսակներ են պէտք, եւ այն երկրները, որոնք ունեն այդ գինատեսակները եւ պատրաստ են մեզ վաճառել այդ գինատեսակները, մենք, միանշանակ, համազործակցում ենք այդ երկրներին հետ», ըսաւ պատգամաւորը:

Օրերս պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը յայտարարեց, որ Հայաստանը ունի յառաջընթաց եւ յաջողութիւններ գէնքի ձեռքբերման բազմազանցման հարցով:

«Ֆրանսան եւ Հնդկաստանը դարձել են մեր հիմնական գործընկերները, բայց նաեւ կան այլ երկրներ, որոնց չեմ ուզենայ անդրադառնալ», ըսած էր նախարարը:

Ռուսաստան Կ'ակնկալէ, Որ Հայաստան Կը Վերսկսի Աշխատանքը ՀԱՊԿ-ի Մէջ

Ռուսաստանը կ'ակնկալէ, որ Հայաստան կը վերսկսի բնականոն աշխատանքը Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան մէջ:

«Ռիա Նովոսթի»-ին տուած հարցազրոյցին ընթացքին Ռուսիոյ արտաքին գործերու փոխնախարար Ալեքսանտր Փանքինը ըսած է, որ Հայաստանի շտապ վերադարձը ՀԱՊԿ-ի բնական եւ լիարժէք աշխատանքային շրջանակ, պիտի նպաստէ կազմակերպութեան գործունէութեան արդիւնաւէտութեան բարձրացման:

«Մենք բոլորս հետաքրքրուած ենք ՀԱՊԿ գործունէութեան հետագայ կատարելագործմամբ եւ անոր՝ որպէս ռազմաքաղաքական դաշինքի արդիւնաւէտութեամբ: Անշուշտ, անոր պիտի նպաստէր Հայաստանի շտապ վերադարձը կազմակերպութեան բնական եւ լիարժէք աշխատանքային շրջանակ», նշած է փոխնախարարը:

Պաշտօնեան, սակայն, ափսոսանք յայտնած է առ այն, որ հայ զաշնակիցները առայժմ իրենց հե-

ռու կը պահեն վերոնշեալէն:

Փոխնախարարը Երեւանի գործընկերներուն կողմէ լրացած է կազմակերպութիւնը քննադատելու փոխարէն սկսելու հասունացած հարցերու քննարկումը քաղաքական եւ փորձագիտական մակարդակներով:

Փանքինի կարծիքով՝ Մոսկուան կ'ելլէ անկէ, որ ՀԱՊԿ-ի շրջանակներուն մէջ Հայաստանի հետ փոխադարձ յարգալից երկխօսութեան շարունակումը կը համապատասխանէ անվտանգութեան ոլորտին մէջ Երեւանի շահերուն, կը ծառայէ խաղաղութեան ու կայունութեան աշակցման եւրասիական տիրոջին մէջ՝ ներառեալ Հարաւային Կովկասը:

Հայաստանը վերջին շրջանին պոչքոթած է ՀԱՊԿ-ի տարբեր հարթակներու վրայ կայացած միջոցառումները եւ չէ մասնակցած կազմակերպութեան անդամ երկիրներու ղեկավարներու, արտաքին գործերու նախարարներու, Անվտանգութեան խորհուրդի քարտուղարներու, խորհրդարանականներու մակարդակներով վերջին նիստերուն:

Նախագահ Վահագն Խաչատուրեան Վիքթոր Օրպանի Յետ Քննարկած Է Համաշխարհային Անվտանգային Հարցեր



Նախագահ Վահագն Խաչատուրեան Հունգարիոյ վարչապետ Վիքթոր Օրպանի հետ հանդիպումի ընթացքին

Պաշտօնական այցով Հունգարիա գտնուող նախագահ Վահագն Խաչատուրեանը հանդիպած է Հունգարիոյ վարչապետ Վիքթոր Օրպանի հետ: Անոնք քննարկած են տարածաշրջանային եւ համաշխարհային անվտանգային հարցեր:

ՀՀ նախագահը վերահաստատած է կայուն եւ յարատեւ խաղաղութեան հասնելու եւ հարեւաններուն հետ բարիդրացիական յարաբերութիւններ ձեւաւորելու Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը:

Միտքեր փոխանակուած են նաեւ տարածաշրջանին մէջ քրիստոնէական եւ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան հարցերուն վերաբերեալ, կարեւորած են Հայաստան-ԵՄ գործընկերութեան խորացումը:

«Այս հանդիպումները կարեւոր են մեր երկիրներու յարաբերութիւններու ներկայիս փուլին: Յոյսով եմ նաեւ, որ անոնք դրականօրէն պիտի ազդեն նաեւ տնտեսական համագործակցութեան զարգացման», ըսած է Օրպան:

«Մենք դժուար ժամանակներ ենք յաղթահարել եւ հիմա պատրաստ ենք ջանքեր ներդնել մեր երկրների յարաբերութիւնների զարգացման ուղղութեամբ, այդ թւում նաեւ նկատի ունենալով այն, որ Հունգարիան առաջիկայում ստանձնում է Եւրոմիութեան նախագահութիւնը: Յուսով եմ, որ Եւրոմիութեան եւ միջազգային այլ հարթակներում մենք կ'ունենանք արդիւնաւէտ համագործակցութիւն», նշած է Հայաստանի նախագահը:

«Հայկական Պաշտպանութեան Արձանագրութիւն» Օրինագիծը Հասած է ԱՄՆ Ներկայացուցիչներու Տուն



Փետրուար 8-ին դեմոկրատ գոնկրէսականներ Ֆրենք Փալոն ու Կէյպ Ամոն, հանրապետական գոնկրէսականներ Մայք Լոյբերի եւ Կաս Պիլիբաքիսի հետ միասին, ԱՄՆ Ներկայացուցիչներու Տուն ներկայացուցին «Հայաստանի պաշտպանութեան արձանագրութիւն» օրինագիծը, որով կ'առաջարկուի կասեցնել Ազատութեան Աջակցութեան Արձանագրութեան 907 բանաձեւի չեղարկման լիազօրութիւնը:

907 բանաձեւը կը յայտարարէ, որ Միացեալ Նահանգները ֆինանսական միջոցներ «չի կրնար տրամադրել Ատրպէյճանի կառավարութեան, մինչ նախագահը չսահմանէ եւ այդպիսով չզեկուցէ Գոնկրէսին, որ Ատրպէյճանի կառավարութիւնը ակնյայտ քայլեր կը ձեռնարկէ՝

դադրեցնելու բոլոր տեսակի շրջափակումները եւ ուժի այլ յարձակողական գործադրումները Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դէմ»:

Սեպտեմբեր 11-էն յետոյ վարչակազմը ստացաւ այս բանաձեւը ժամանակաւորապէս կասեցնելու հնարաւորութիւնը՝ Ատրպէյճանը 907 բանաձեւի դրոյթներու կիրառումէն ազատելու համար:

Այս օրէնսդրական արձանագրութիւնը ներկայացուցաւ այն ժամանակ, երբ Ծերակոյտը քուէարկութեամբ ընդունեց \$3.000-ը օրինագիծը, որ յայտնի է նաեւ որպէս «Հայկական Պաշտպանութեան Արձանագրութիւն», որն առաջնորդեցին դեմոկրատ ծերակուտական Կերի Փիթըրզը եւ հանրապետական ծերակուտական Մարքո Ռուպիոն:

Պաքուն Բողոքի Գիր Յղած Է ԵՄ-ին



ԵՄ դիտորդներ Հայ-ատրպէյճանական սահմանին

Ատրպէյճանի մէջ ԵՄ դեսպան Փեթր Միխալքօն հրաւիրուած է Արտաքին գործերու նախարարութիւն:

Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը վերահաստատած է «իր լուրջ մտահոգութիւնը» Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան (EUMA) գործունէութեան վերաբերեալ՝ նշելով, որ «այն կը հակասէ առաքելութեան եւ գործունէութեան վերաբերեալ նախկին պայմանաւորուածութիւններուն»:

Ըստ Պաքուի՝ տարածաշրջանին մէջ կայունութիւն, Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ վստահութեան հաստատելու իր յայտարարութիւններուն հակառակ, առաքելութիւնը որպէս «հակաստրպէյճանական քարոզչական գործիք կ'օգտագործուի»:

Պաքուն մեղադրած է ԵՄ-ն «հեռադիտակներով դիւանագիտութիւն» վարելու համար՝ նշելով, թէ «առաքելութիւնը կը նպաստէ եւրոպացի պաշտօնեաներու եւ ոչ-պաշտօնական պատուիրակութիւններու այցերուն սահմանամերձ շրջաններ»:

«Բոլոր նման այցերը, առանց բացառութեան, կ'օգտագործուին Ատրպէյճանի դէմ առեւտրութիւն տարածելու համար», նշած է Պա-

քուն՝ շեշտելով, որ «յատկապէս մտահոգիչ է, որ «հեռադիտակային դիւանագիտութեան» նման աշխուժացումը տեղի կ'ունենայ «սահմանի երկայնքով աննախադէպ հանգիստ իրավիճակի պայմաններու մէջ, երբ Ատրպէյճանը եւ Հայաստանը վստահութեան ամրապնդման լուրջ միջոցառումներ կ'իրականացնեն»:

Օրերս Պաքուն հաղորդեց, որ Ատրպէյճանի մէջ ձեռքարկուած է Հայաստանէն սահմանը ապօրինի հատած Չեխիոյ քաղաքացի: Պաքուն փորձեց կապ գտնել անոր եւ ԵՄ դիտորդական առաքելութեան միջեւ՝ Չեխիոյ քաղաքացին մեղադրելով լրտեսութեան համար:

Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը նաեւ յայտարարած է, թէ «ԵՄ առաքելութեան պատասխանատուութեան հատուածին մէջ սահմանի ապօրինի հատման փորձի վերջին դէպքը լուրջ ստուեր կը նետէ առաքելութեան յայտարարած նպատակներուն վրայ»: «Նման գործողութիւնները որեւէ կերպ չեն համապատասխաներ, որպէս չէզոք դերակատար, վստահութեան ամրապնդման շուրջ առաքելութեան յայտարարուած նպատակներուն», նշած է Արտաքին գործերու նախարարութիւնը:

Զիրականացան Ալիեւի Ծրագիրները

Շարունակուած էջ 1-էն

Երբ, որոնց համաձայն՝ «քուէարկութիւնը անցած է մրցակցային պայմաններու մէջ, այլընտրանքային հիմունքներով եւ բարենպաստ մթնոլորտի մէջ»: Սակայն, իրականութիւնը այն է, որ Ատրպէյճանի ընդդիմադիր կուսակցութիւնները պոյքօթի ենթարկած էին նախագահական ընտրութիւնները, յայտարարելով թէ արդիւնքները արդէն իսկ կանխորոշուած էին: Իսկ ընտրութիւններուն մասնակցող միւս թեկնածուները իրենց ելոյթներուն մէջ կը գովաբանէին Իլիւհամ Ալիեւին:

Եւրոպացի դիտորդներու գեկոյցներուն մէջ տեղ գտած գնահատականները կը յիշեցնեն ոչ հեռու անցեալի Հայաստանի ընտրութիւններէն: Մասին անոնց գեկոյցները: Հայաստանի ժողո-

վուրդը գիտակցելով, որ ընտրութիւններու միջոցաւ պիտի չկարողանայ հասնիլ իշխանափոխութեան, ստիպուած եղաւ դիմելու աւելի կտրուկ քայլի՝ համաժողովրդային յեղափոխութեամբ հեռացնելով նախկին փտած ու կաշառակեր վարչակարգը: Ատրպէյճանի ժողովուրդը եւս այլ ելք չունի, բացի հետեւելու Հայաստանի օրինակին:

ԱՄՆ-ի, Գերմանիոյ, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ եւրոպական այլ երկիրներու ղեկավարները չեն օգնուելու յուսախաբութեան: Այսպիսով, ձախողեցան օրինականութիւն ապահովելու անոր ծրագիրները ու ան պիտի շարունակէ մնալ անդամ՝ բռնապետներու ակումբին:

Գ.ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԸԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Արարատ Միրզոյեանը Միջազգային Քրեական Դատարանին Մէջ Բարձրացուցած Է ԶՅ Դրոշը

Փետրուար 8-ին Միջազգային քրեական դատարանին մէջ տեղի ունեցած է Հայաստանի՝ ՀՌՈՄԻ կանոնադրութիւնը 124-րդ ստորագրող երկրի անդամակցութեան նուիրուած պաշտօնական միջոցառումը:

Միջոցառման մեկնարկին ՄՔԴ նախագահ Փյոթր Հոֆմայսթրի եւ

ՄՔԴ անդամ երկիրներու համաժողովի նախագահ Փայվի Քաուքորանթայի ներկայութեամբ տեղի ունեցած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի կողմէ Հայաստանի Հանրապետութեան դրոշի բարձրացման արարողութիւնը:

Ինչ էր Ասում Արայիկ Յարութիւնեանը

Շարունակուած էջ 2-էն

քննադատութեան համար: Ես հրաժարուեցի ներողութիւն խնդրել, ինչից յետոյ տեղի ունեցաւ այդ դէպքը:

Յարութիւնեանն ասաց, որ ինձ որպէս գուսպ լրագրող է ճանաչում, իր համար անսպասելի էր նման դէպքը: Շարունակեց, որ յաճախ այնպէս է լինում, որ «ճառան տիրոջը հաճոյանալու համար ակելորդ նախաձեռնողականութիւն է դրսեւորում»: Ես մտածեցի, որ ամէն ինչ ուզում են բարդել կատարողների վրայ: Ասաց, որ քննութիւն կ'ընթանայ այս դէպքով եւ ինձ նոյն օրը կ'ընդունին գլխավոր դատախազի պաշտօնակատար Կարէն Գաբրիէլեանը: Նաեւ ասաց, որ խօսելու է բոլորի հետ, նաեւ՝ Յարութի չօր՝ պատգամաւոր Արեգ Աւագեանի հետ:

Ինձնից յետոյ նա անմիջապէս պիտի ընդունէր Արցախի փաստաբաններին եւ լրտեսութեան մէջ մեղադրուող Արման Իսրայէլեանի ծնողներին: Ինձ վրայ յարձակման օրը անյայտ անձինք մտել էին Արման Իսրայէլեանի փաստաբանների գրասենեակը եւ շուռ տուել իրենք, թափել փաստաթղթերը: Արման Իսրայէլեանի փաստաբան Ռաֆայէլ Զհանգիրեանի կարծիքով՝ նրանց ուղղորդել էին իրաւապահները:

Յարութիւնեանը այնուհետեւ սկսեց գանգատուել ստեղծուած վիճակից: «Էս փաստաբանները՝ մի կողմից, Օսիպովը՝ մի կողմից, չեն հասկանում երկրի վիճակը...», - տխուր ու բորբոքուած ձայնով բողբոջեց չհասկացուած լինելու համար: Մի պահ ուզում էի ասել՝ բայց ես հասկանում եմ: Յետոյ շարունակեց գանգատուել. «Ես, իրօք, չգիտեմ, թէ վաղը ինչ եմ ասելու ժողովրդին: Երկու տարբերակ կայ՝ վատ կամ վատթարագոյն: Այսպիսի սինիստր վիճակ երբեք չի եղել՝ Ամերիկան, Արեւմուտքը, Հայաստանն ու Ատրպէյճանը նոյն բանն են ասում: Դէ մի փոքր Ռուսաստանն է տարբերում, էն էլ...»:

Այս ժամանակահատուածում կարէն Սարգսեանը Արցախի ամենազգեցիկ պաշտօնեաներից մէկն էր: Ասում են, որ վարդանեան-Յարութիւնեան առճակատման ժամանակ, որն աւարտուել էր 2023-ի փետրուարի 23-ին վարդանեանի պաշտօնակցութեամբ, կարէն Սարգսեանը այն պաշտօնեաներից էր, որը Յարութիւնեանի կողքին էր մնացել: Օրինակ, ակելի վաղ՝ Յունուարի 16-ին, Արցախի ԱԱԾ գործող տնօրէն Աշոտ Յակոբջանեանն ազատուել էր ազգային անվտանգութեան մարմիններում ծառայութիւնից՝ երկարամեայ ծառայութեան կենսաթոշակի անցնելու կապակցու-

թեամբ: Նա Ռուբէն Վարդանեանի խորհրդական, Արցախի ու Հայաստանի ամենախոշոր գործարարներից մէկի՝ Արման Յակոբջանեանի հօրեղբօր որդին է, որն այն ժամանակ անցել էր Ռուբէն Վարդանեանի ճամբար:

Նկատի ունէր Արցախի յեղափոխական կուսակցութեան նախագահ Արթուր Օսիպեանին, որն այդ օրերին հոյսեր էր անում ու կոչ անում ցասարակութեան համախմբում, որպէսզի տասնեակ հազարներով գնան դէպի Հակարիի կամուրջ ու պահանջեն բացել միջանցքը:

Իմ տպավորութիւնները

44-օրեայ պատերազմից յետոյ Արայիկ Յարութիւնեանի աթոռը երբեք էր: Պատերազմից մի քանի ամիս առաջ ընտրութիւններին յաջողութեամբ վերարտադրուած ու յոխորտացող նրա թիմից քիչ բան էր մնացել: Գաղափարական շատ բան չկար այդ թիմում, պարզապէս ընտրութիւններին ներդրում էին արել, որ յետագայում ակելի շատ ստանան:

Պատերազմից յետոյ Յարութիւնեանն ընտրեց, այսպէս ասած, ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորման տարբերակը: Ընդդիմադիրներին եւ բողոքողներին պաշտօն էր տալիս ու ասում՝ միասին դուրս գանք այս փոսից: Շատ արդիւնաւէտ էր այդ կառավարութիւնը. թիմային ոգի չկար, իրար խանգարում էին, երբեմն աջ ձեռքը

ԶՅ-Ն Ունի Ուժեղ Եւ Մարտունակ Բանակ

Շարունակուած էջ 1-էն

տութեան ինքնիշխան իրաւունքն է. «Եւ ՀՀ-ն ունի ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալու իրաւունք, այն արձանագրմամբ, որ Հայաստանի Հանրապետութիւնն իր տարածքային ամբողջականութիւնը, անկախութիւնը ինքնիշխանութիւնն ամրապնդելու համար է բանակ ստեղծում»:

«Հայաստանը ճանաչում է տարածաշրջանի բոլոր երկրների տարածքային ամբողջականութիւնը եւ նոյնն ակնկալում է տարածաշրջանի բոլոր երկրներից: Ես ամէն ինչ կ'անեմ, որպէսզի մեր տարածաշրջանում խաղաղութիւն հաստատուի, կ'անեմ աշխատանքի այն բաժինը, որը վերաբերում է մեզ, եւ ես յոյս ունեմ, որ մեր տարածաշրջանի միւս երկրները նոյնպէս այդպէս կը վարուեն», յաւելած է ան:

Լրագրողի դիտարկման, թէ նոյնիսկ եթէ խաղաղութեան, տարածքային ամբողջականութեան մասին միջազգային երաշխիքներ ստանայ Պաքոէն, արդեօք կը հաւատա՞յ Ալիեւին, որ վերջինս կը պահէ պայմանաւորուածութիւնները, Նիկոլ Փաշինեան արձագանգած է. «Ես հաւատում եմ Աստուծոյ եւ կարծում եմ, որ իւրաքանչիւր իրեն յարգող պետութիւն պէտք է հետեւի իր ստանձնած պարտաւոր-

ութիւններին»:

Հայաստանը չի ժխտեր եւ մերժեր Ռուսաստանի հետ համագործակցութիւնը ընդհանրապէս եւ անվտանգութեան ոլորտին մէջ եւս, չայտնած է Նիկոլ Փաշինեան, յաւելելով՝ անվտանգութեան ոլորտին մէջ պատրաստ են, եւ կը քննարկեն ու կ'աշխատին յարաբերութիւններ հաստատել, օրինակ, Եւրոմիութեան, Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու, Իրանի եւ այլ երկրներու հետ:

«Նոյն Միացեալ Նահանգները, կամ Ֆրանսայի, կամ Հնդկաստանի, կամ Եւրոմիութեան հետ անվտանգային ոլորտում մեր յարաբերութիւնները բնականաբար ուղղուած չեն Ռուսաստանի դէմ: Դրանք պարզապէս այն արձանագրման իրողութիւնն են, որ նախկինում մեր ունեցած անվտանգային յարաբերութիւնները չեն հասցէագրում մեր անվտանգային կարիքները», ընդգծած է ան:

Հայաստանը կը դիտարկէ՞ ապագային ՆԱԹՕ-ի անդամակցութիւն, վարչապետը ըսած է՝ նման հարց օրակարգին մէջ չկայ:

«Մենք ՆԱԹՕ-ին անդամակցութեան հարց չենք քննարկել եւ չենք քննարկում: Մենք ՆԱԹՕ-ի հետ ունենք գործընկերային յարաբերութիւններ, եւ այդտեղ որեւէ նորութիւն չկայ», նշած է ան:

չգիտէր, թէ ինչ էր անում ձախը: Պրոֆեսիոնալները կողքին հաւաքում էին մեծաքանակ մակաբոյժ դիւետանտներ, ֆինանսաւորում նրանց ծրագրերը: Բայց այս գործողութիւններին արդիւնքում Յարութիւնեանը որոշակիօրէն չէզոքացրեց դժգոհութիւնը եւ կայունացրեց իր դիրքերը:

Յետոյ եկաւ (կամ հրաւիրեցին) Ռուբէն Վարդանեանը եւ սկսեց քաղաքականութիւն խաղալ: Յարութիւնեան-Վարդանեան թիմերի (Բակօ Սահակեան, Արկաղի Ղուկասեան եւ այլ ընկերներ) առճակատումը առաջին անգամ աւարտուեց Ռուբէն Վարդանեանի հրաժարականով, երկրորդ անգամ՝ Արայիկ Յարութիւնեանի հրաժարականով:

Ի տարբերութիւն շատ-շատերի՝ Արայիկ Յարութիւնեանը խօսում էր հանրութեան լայն շերտերի հետ եւ ներկայացնում էր երկրի առջեւ ծառայած մարտահրաւէրները: Միւս կողմից էլ, կարծես, հաճոյանում էր այդ հանրութեանը, որը շատ յաճախ չէր ուզում լսել հնարաւոր փորձանքների մասին: Այս ամէնում իր մեղքի բաժինն ունէր նաեւ հայաստանեան ընդդիմութիւնը եւ նրանց լրատուամիջոցները, որոնք իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար շարունակում էին մանիպուլացիոն նաեւ Արցախի ժողովրդին: Շատերը մինչ այդ էլ դժուարութեամբ էին ընկալում, որ 2020 թուականի Նոյեմբերի 9-ից յետոյ լրիւ այլ իրականութեան մէջ ենք յայտնուել:

«ՍԻՎԻԼՆԵԹ»

Հովանաորութեամբ՝
Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կազմակերպութեամբ՝
Ս. Դ. Հ. Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ

ՄԵԾԱՐԱՆՔԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ 24 Փետրուար, 2024 ին

Տեղի կ'ունենայ՝
Երեկոյեան ժամը 7:30-ին

Փետրուար
24

Ժողովրդային եւ հայրենասիրական
երգերով կը մասնակցին՝

ԴԱԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
եւ
ՀԱՐՈՒԹ ՀԱԿՈԲՅԱՆ

Փաստփնայի Հ.Կ.Բ.Մ. Կեդրոնէն ներս
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Մուտքի Նուէր՝ 100 Տոլար

ՏՈՍՄԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՉԱՅՆԵԼ
Կարիսէին 626•755•4773
Քնարին 626•491•7899

Pashinyan to The Daily Telegraph: We Are Diversifying Security Relations, Not Abandoning Cooperation With Russia

Azerbaijan is Abandoning Agreements Reached on International Platforms and With Armenia



YEREVAN — Armenia Prime Minister Nikol Pashinyan, in a lengthy interview with the British newspaper The Daily Telegraph, reiterated that Armenia does not any longer rely on Russia as its main military and defense partner because Russia.

“We have not said that we deny and reject cooperation with Russia in general and in the security sector in particular. What we have said is that we are going to diversify our relations in the security sector. What does this mean? Does this mean that we are going to break our security relationship with Russia? No, it doesn’t mean that, but it means that in the field of security, we are preparing and ready,

and we are discussing and working to establish relations, for example, with the European Union, which is already a reality by and large, with France, which is already a reality by and large, with the United States, which is already by and large a reality, with the Islamic Republic of Iran, which is already by and large a reality, with India, which is already by and large a reality, and with many other countries. Our security relations with the United States, or France, or India, or the European Union are not naturally directed against Russia. This is simply the consequence of the reality that the security relationships we used to have in the past do not address our security needs.

As to NATO, this is not an item on our agenda. In other words, we have not and are not discussing NATO membership. We do have partnership relations with NATO, and there is nothing new there. We used to have an Individual Partnership Action Plan, now that program is being reformat-ed into a certain partnership format that doesn’t imply membership. I will also tell you something that we are at least a de jure member of the CSTO today, and I am not sure if there are discussions on that topic in general, or rather in Armenia, as to how well the alliance-based strategy corresponds to Armenia’s interests, in general, in the long term.”

Asked about the peace process between Armenia and Azerbaijan, Pashinyan stated that architecture and principles of the peace treaty have been agreed upon. But Azerbaijan has been abandoning agreements reached.

“At the end of last year it seemed to us that we were very close to finally agreeing on the text of the final treaty, but then Azerbaijan three times refused to participate in negotiations in different formats, after which presidential elections in Azerbaijan were scheduled. And, in fact, we are still on this point, and I assume that after the presidential elections, we will be able

Continued on page 4

Russia Asking for Assurances from Armenia Regarding Vladimir Putin’s Possible Visit

MOSCOW — The Kremlin expects Yerevan to provide certain assurances regarding the possible arrest of Russian President Vladimir Putin under an International Criminal Court (ICC) warrant, Russia’s Interfax news agency reported today.

“Of course, it is very important to receive certain assurances from our Armenian partners. This issue is to be resolved within the framework of bilateral dialog, which we intend to do,” Russian presidential spokesman Dmitry Peskov said.

Peskov’s words came after Armenian Prime Minister Nikol Pashinyan said that he was not the one to decide on the possible arrest of the Russian president, who is wanted by the International Criminal Court, if he visited Armenia.

In an interview with Britain’s The Daily Telegraph on February 11, Pashinyan did not answer a direct question about whether Russian President Vladimir Putin could be arrested and extradited to The Hague if he visited Armenia.

Such an obligation is stipulated by membership in the ICC, which

Continued on page 4

Four Armenian Soldiers Killed and Another Wounded in Azerbaijani Shooting

YEREVAN -- Four Armenian soldiers were killed and another wounded when their positions on Armenia’s border with Azerbaijan came under cross-border fire early on Tuesday.

Armenia’s Defense Ministry said its outposts around the border village of Nerkin Hand in southeastern Syunik province were targeted for four hours. The gunfire stopped at 9:30 a.m., it said in a statement.

The head of the village administration, Khachatur Baghdasaryan, told RFE/RL’s Armenian Service that he heard intense gunshots at around the same time.

Azerbaijan confirmed that its troops deployed in the area opened fire early in the morning. Its State Border Service claimed to have destroyed an Armenian army post which fired at its positions and wounded one of its servicemen the previous evening.

Վարդան Մամիկոնեանի անձնագոհութեան եւ Աւարայրի ճակատամարտի պատկերների նկարագրման լաւագոյն օրինակ կարող է ծառայել կոմպոզիտոր Մակար Եկմալեանի մշակած «Պլպուլն Աւարայրի» խմբերգը՝ գրուած Միխիլարեան Հայրերից, հանճարեղ բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» ծաւալուն, եռմասանի վիպերգի երրորդ մասի խօսքերի վրայ:

Բանաստեղծը Պլպուլին է վկայակոչում որպէս Աւարայրի ահեղ, աշխարհացունց ճակատամարտի ականատեսի, որպէսզի նա աշխարհին պատմի կարմիր Վարդանի եւ նրա զինակից ընկերների մասին, թէ ինչպէս ընկան նրանք յանուն Հայրենեաց ու հաստատեցին, որ ՄԱՁՆ ԻՄԱՅԵԱԼ՝ ԱՆՄԱ ՀՈՒԹԻՆ է:

Եկմալեանի Երաժշտութեան մեղմիկ, քնքոյչ, պատմողական բնոյթը աւելի քան համահունչ է Ալիշանի գրաբար-արեւմտահայերէնի զգլխիչ բնոյթին:

Հիմնականում ակորդներով (սա՛՝ Եկմալեանի գրելաձևն է, ձայների ուղղահայաց ընթացքով, նոյնը նաեւ՝ նրա Պատարագում,- ՀԵՆ. Ա.), եւրոպական մտածողութեամբ մշակուած խմբերգի բովանդակութիւնը աւելի ըմբռնելի է դառնում բաս-օտտինատոյի (համառ, մնացուց բաս) շնորհիւ, որն անդադար կրկնուելով, հաստատում է ստեղծագործութեան միտք բանին:

Այժմ երկու քառերյակ Ղեւոնդ Ալիշանի քնարական վիպերգից, այնքա՜ն մեղմիկ ու նրբին, որն

Ռուբեն Սեւակ (1885-1915) Հայոց Ցեղասպանութեան Նահատակ Մեծ Գրագետներէն

ՅԱԿՈՒ ՏԻՆԵԱՅԵԱՆ

15 փետրուարին կը նշուի Հայոց Ցեղասպանութեան Նահատակ գրագետներէն, բանաստեղծ Ռուբեն Սեւակի (Տոքթ. Ռուբեն Չիլիկիւրեան) ծննդեան օրը (Սիլիվրի, 15 փետրուար 1885 - 26 Օգոստոս 1915), որուն միակ դուստրը՝ Մեծ եղեռնէն վերապրած Շամիրամ Սեւակը (Պոլիս, 10 Յուլիս 1914 - Նիս, Ֆրանսա, 18 Հոկտեմբեր 2016) մահացաւ 102 տարեկանին:



Արեւմտահայ փողոտուած մտաւորական հոյլի կարկառուն դէմքերէն մին: Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, բժիշկ, ազգային-հասարակական գործիչ: Արուեստագետ սերունդի քերթողական սեռի կրտսեր երեք ներկայացուցիչներէն մէկը՝ Վարուժանի եւ Մեծարենցի կողքին, առանց զինք անջատելու այն ոսկեշղթայէն, որուն ամրացումն են յիշեալ երեքը կանխած միւս երկու մեծերը՝ Թէքէեանն ու Սիամանթոն:

տակաւին մէկ ուրիշ ազգ, որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մե՛ր, ստրկացած թրքահայերու կեանքը...: Տառապիլ, ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուելի, բռնաբարուիլ, գետնաքարշ տապալիլ, ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտիլ այնպիսի մէկ վայրկեանիդ, ուր արիւն-արցունք պիտի պոռթկար աչերէդ... մաղթանքի ճիշդ հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ... մեռնիլ - հոգեպէս մեռնիլ - ու ապրիլ ձեւացնել... ասա՛ դերասանական անուշիւրէն կեղծ կեանքը, որ մե՛րը եղաւ այնքան երկար տարիներ...»:

Յաճախ դիտաւորեալ կ'ուզուի բնութագրել Ռուբեն Սեւակը սոսկ «բնութեան եւ սիրոյ քնքուշ երգիչ կամ տաղերգու»: Սեւակ մէկն է այն հազուագիւտ արեւմտահայ մտաւորականներէն, որ հեռատեսութիւնն ու նախագագացումը ունեցաւ հայութիւնը զգուշացնելու, մինչեւ իսկ արթնութեան հրաւիրելու, սթափութեան կոչեր ընելու՝ մեր ժողովուրդին դէմ նիւթուող սաղրանքներուն դէմ, 1915-էն բաւական առաջ: Հետեւաբար, իրեն վերագրուող «սէմպոլիսթ», «քնքուշ քնարերգու» որակումները կը միտին նսեմացնել բանաստեղծին երկնառաք տաղանդն ու արժէքաւոր գործերը, աղաւաղելու՛ իսկ անոր անխառն հայրենասէրի, ազգային անբասիր գաղափարի անշեղ հաւատքով վառ Հայու հոգին:

Համիտեան հայաջինջ կոտորածներէն 13 տարի ետք, երբ մեր մտաւորականներէն շատերը այդ սահմանադրութեան մէջ կը հաւատային միամտօրէն տեսնել «արդարասիրութիւն, ազատատենչու-

հոգ չէ թէ խուլ»: Եւ այդ պոռուքներու, աղաղակներու, արիւնյեղց արգանդէն կը ծնին կիլիկեան սրտակեղեք երգերը Ռուբեն Սեւակի, 1909-ի Յուլիսին, «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնը մանաւանդ:

Օրօր, օրօ՛ր...: Օրօ՛ր ըսեմ քնանաս, Վիրաւոր հօ՛րդ ճիշդն ա՛լ չիմանաս: Ծիծու ծրծա՛ծդ թոյն է, կաթ չի գիտնաս...: Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Արի՛ւն-հեղեղ յորդեց այս սուրբ ծորերէ, Բայց չի փախիս, փարե՛ երկրիդ, զայն սիրէ, Հողիդ վրայ գերի մ'ըլլար, այլ սիրէ...: Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Հօրըդ վըրայ եթ անշո՛ւնչ չիմկայ ես, Զի ուխտեցի Հռովմի՛ է՛գ գայլիմ պէս, Նոր Ռոմուլոս մը դիտեցնել ստիմքէս...: Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Բազուկներու պարա՛ն, ոտքիս ալ կացի՛ն, Ստիմքէս զո՛յգ պտուկներն, ա՛հ, կտրեցին: Վերքէս արիւնս ծօ՛ծ, որդեակ մի-ածիմ...: Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Ահա կ'իյնամ...: Հայաստանը մա՛յր քեզի: Կտակ կու տամ այս կտորած սուրմ երկսայրի՛ Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...:

Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Իր ծննդավայրի Ասքանազեան նախակրթարանը, ապա Պարտիզակի Ամերիկեան վարժարանը յաճախելէ ետք, Ռուբեն Սեւակ 1901-ին կը սկսի յաճախել Պոլսոյ Պէրպէրեան վարժարանը, որուն հիմնադիր-տնօրէն, ուսուցչապետ եւ բանաստեղծ Ռեթէոս Պէրպէրեանի շունչին ու հոգածութեան ներքեւ կը թրծուին ապագայ բանաստեղծին գրական-ստեղծագործական ներաշխարհն ու ազգային ոգին: 1905-ին փայլուն յաջողութեամբ աւարտելէ ետք յիշեալ վարժարանը, նոն տարին կ'անցընէ Լօզան, ուր կը հետեւի բժշկագիտական դասընթացներու, ի վերջոյ վկայուելով իբրեւ բժիշկ՝ 1911-ին: Լօզանի հիւանդանոցներէն մէկուն մէջ շուրջ երեք տարի կ'աշխատի որպէս ներքին հիւանդութեանք բժիշկ եւ այդ ջրջանին լոյսի բարիքին կու գայ իր նշանաւոր «Բժիշկի Գիրքէն Փրցուած էջեր» խորագիրով արձակ էջերու շարքը:

Ռուբեն Սեւակ իր ուսանողական տարիներուն իսկ հաստատակուռ համոզմամբ ըսած էր այն ինչ որ պարզ ճշմարտութեամբ կը բացատրուի, կը թաւալի մեր արեան կայլակներուն մէջ՝ գիտութեան անեղրութեան ու բարութեան յաւերժութեան մասին. «... Ու այս խաբուսիկ ստուերներուն մէջ եթէ կայ հաստաբուն եւ իրական բան մը, այդ ալ՝ ըստ իս, զարգացումն է, բարութիւնն է: Գիտունը անհունութիւն մը կ'ապրի, ու բարին՝ անմահութիւն մը: Կեանքը շատ տիմար բան մը եղած պիտի ըլլար, եթէ անոր նպատակը արշա՛ւ մ'ըլ-

Շար.ը էջ 15



Ռուբեն Սեւակ եւ Եանն Աբել-Սեւակ՝ մտերմութեան մէջ

Բերայի մէջ, 22 Օգոստոս 1908-ին, այսինքն՝ Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն շուրջ մէկուկէս ամիս ետք, «Հայ Թատրոն»ի գարթօնքի փառաբանանքն ընող 23-ամեայ երիտասարդ Ռուբեն Սեւակ, յանպատրաստից իր մէկ ճառով վեր առնելով այն ատեն հազիւ 20-ամեայ երիտասարդ դերասան Վահրամ Փափագեանի երկնատուր տաղանդը՝ վերջինը Օթելլոյի դժուար կերպարը մարմնաւորելուն առիթով, ի միջի այլոց կ'ըսէր. «... Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները, ես չեմ տեսներ ու չեմ ալ կրնար հաւատալ, որ գտնուի

թիւն, եղբայրութիւն», որ «քատէշլիք»ի, «հաւասարութեան» իբր նոր էջ մը պիտի բանար հայուն համար, հեռատես եւ իրատես, իրապաշտ բանաստեղծ Ռուբեն Սեւակն առաջիններէն էր, որ նոյն 1908-ին կը գրէր. «... Գոմ-Քափուի մէջ խեղճ կապար մը կը սուրայ, ու անհաւասիկ քառասուններու գունդ մըն է որ սուիններով կը յարձակի միամիտ հայերու վրայ: Լրագիրները կը բողոքեն, մեկանը կը հոսի, գրիչները չի հաւատալիք գործունէութիւն մը ցոյց կու տան. բայց որո՞ւ դէմ, ո՞վ է լսողը... Գաւառներէն ամէն օր բողոքի ձայներ կը հասնին...: Լսելու այդ պաշտօնին համար դատաւոր մը կը փնտռուի,-

միջազգային կանանց տօնի առթիւ
SIP AND PAINT
CHEESE AND WINE
MARCH 6 2024
8PM - 10PM
1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104
FOR RESERVATION
CALL AT +1(626)681-9455
DONATION FEE
\$45

Լոս Անճելոս ճարձն-Հայաստան Բարեկամութեան Երեկոյթ



Անցեալ Հինգշաբթի, Փետրուարի 8-ին, 2024, շքեղ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ Արեւմտեան Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդարանի «Արմէն Համբար» սրահին մէջ, նուիրուած ճաբոն-Հայաստան դիւանագիտական շարաբերութիւններու հաստատման 30-ամեակին: Սոյն պատմական իրադրութեան ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Լոս Անճելոսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Փոլ Գրիգորեան, հիւրաբար քաղաքս գտնուող Ռուսիայի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթև Եպս. Յակոբեան, Լոս Անճելոսի Հայաստանի աւագ հիւպատոս՝ Կարէն Իսրայէլեան, տեղւոյս ճաբոնի աւագ հիւպատոս՝ Գէնգո Սոնէ, ինչպէս նաեւ թեմական ղեկավարներ ու տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

նագրուած յառաջընթացին մասին: Լոս Անճելոսի Քաղաքապետութեան անունով ելոյթ ունեցաւ Փոլ Գրիգորեան եւ իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց երկու երկիրներու միջեւ ստեղծուած բարեկամական ամուրկապերու համար, մաղթելով նորանոր ձեռքբերումներ տարբեր բնագաւառներու մէջ: Այնուհետեւ տեղի ունեցաւ պաշտօնական հռչակագիրներու փոխանակում: Հետաքրքրական գրոցներով հանդէս եկան Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆի վարչութեան ատենապետ Մարիա Միհրանեան եւ Կլեմէնտ քաղաքի քաղաքապետարանի վերակացու՝ Ռուբիկ Կոլանեան: Անոնք յատուկ պատուիրակութիւններով ճաբոն կատարած զբօսաշրջական այցելութիւններուն կապակցութեամբ խօսքերով՝ դրուատանքով արտայայտեցին իրենց տպաւորութիւնները, երկրի պատմական ու տե-



Գործադրուեցաւ խնամուած յայտագիր մը հանդիսավարութեամբ երիտասարդ իրաւաբան Մայք Տէմիրճեանի: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ առաջնորդ Յովնան Սրբազան եւ իր տպաւորութիւնները յայտնեց պատուիրակութեամբ մը ճաբոն կատարած ուղեւորութեան մասին: Ան յատուկ դրուատանքով արտայայտուեցաւ ճաբոնի ժողովուրդին, երկրի գեղեցկութեան, յառաջդիմութեան, ալյազան առանցնալատութիւններուն եւ հայ ժողովուրդին հանդէպ ցուցաբերուած մարդասիրական վերաբերմունքին մասին: Ելոյթներ ունեցան նաեւ Հայաստանի եւ ճաբոնի աւագ հիւպատոսներ Կարէն Իսրայէլեան ու Գէնգո Սոնէ: Անոնք իրենց գոհունակութիւնն արտայայտեցին անցնող 30 տարիներու ընթացքին երկու երկիրներու միջեւ ստեղծուած դիւանագիտական կապերու հաստատման առթիւ, տարբեր ոլորտներու մէջ արձա-

սարժան վայրերու մասին: Նշենք նաեւ որ ներկայները՝ բովանդակ երեկոյթի ընթացքին, սահիկներու միջոցով, ծանօթացան ճաբոնին եւ անոր գեղատեսիլ ու յիշարժան շրջաններուն: Երեկոյթի գեղարուեստական յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ Voce Dell Orchestra նուագախումբի քառեակը, ղեկավարութեամբ՝ Աշոտ Տումանեանի (Չութակ) եւ նուագակցութեամբ Պետրոս Պոյաճեանի, Արսէն Յովսէփեանի (Չութակ) եւ Կարիկ Թերեզեանի թավջութակ, որոնք մեծ ապրումով մեկնաբանեցին անմահ Կոմիտասի ստեղծագործութիւնները: Ինքնատիպ պարով մը ելոյթ ունեցաւ ճաբոնուհի արուեստագէտ պարուստց Պանտո Հիտոսէմին: Արդարեւ, ան իր ազգային գունագեղ տարազով, տպաւորեց ներկայները, ճաբոնական դասական ինքնուրոյն եւ խորհրդաւոր մենապարով: Իր փակման խօսքին մէջ

Փերակ Շաբաթօրեայ Դպրոցը Տօնեց Տեառնընդառաջը եւ Տրնդեզը



Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Փերակ շաբաթօրեայ դպրոցը 10 Փետրուար, Շաբաթ օր մեծ խանդավառութեամբ տօնեց Տեառնընդառաջը եւ Տրնդեզը: Փերակ շաբաթօրեայ դպրոցի սաներու անհամբերօրէն սպասած, իրենց շատ սիրելի Տեառնընդառաջ-Տրնդեզը նշուեցաւ 10 Փետրուար Շաբաթ օր: Այդ օր աշակերտները դպրոցի սրահի մէջ նախ երգեցին Տէրունական աղօթքը եւ Հայաստանի քայլերգը, հնչեցուցին «Հայ աշակերտին ուխտը», ապա, իրենց ուսուցչուհիներէն կրկին լսեցին Տեառնընդառաջի իմաստը, խորհուրդը եւ աւանդութիւնները: Ապա

երաժշտութիւնը եւ յայտագրի յատուկ հիւրերը, Փաստենա քաղաքի Հայկական ձեմարանի, Փաթիլ եւ Սինթիա Ալպարեան պարուստց քոյրերու կողմէ դաստիարակուած պարախումբի աշակերտները աւանդական պարերով եւ դճոլով իրենց ժիր մասնակցութիւնը բերին տօնակատարութեան, խանդավառեցին ներկայները, ստեղծեցին ցնծուն եւ տօնական մթնոլորտ: Ապա աշակերտները համարձակ ուսումներով սկսան անցնիլ կրակի վրայէն. մանկապարտէզի սանիկները իրենց մօր եւ հօր ձեռքը բռնած, իսկ 7, 8 կամ 9 տարեկան «մեծցածները» աւելի բարձր եւ դարձաբարձիկ շարժումներով՝ տպաւորելու համար ներ-



աշակերտները շարան շարան ուղղուեցան եկեղեցի, վառեցին մոմեր, եւ այդ մոմերով, շարականներ երգելով դուրս ելան տաճարէն եւ վառեցին Տրնդեզի կրակը: Դպրոցի տնօրէն Նորայր Տատուրեանը ներկայներուն բացատրեց, թէ սա պայծառ զարնանամուտ է, աշակերտներու վառած հուրը ջերմ եղանակի, խաղաղ օրերու, նոր ու բարի սկիզբներու աւետարեան է, այդ խառնուրդը՝ Քրիստոսի լոյսի խորհրդանշանն է. ապա ան մեկնարկը տուաւ տօնակատարութեան: Հնչեց հայկական աշխույժ

կաները: Տօնակատարութեան ընթացքին ներկայները վայելեցին դպրոցի պատրաստած աւանդական սեղանը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Փերակ շաբաթօրեայ դպրոցը 4-14 տարեկան հայտնորդներուն կու տայ հայեցի դաստիարակութիւն, թէ կը սորվեցնէ հայոց լեզուն եւ թէ՛ ազգային եւ հոգեւոր ճոխ ձեռնարկներու կատարումով կը կերտէ հայկական ինքնութիւն: Դպրոցի արձանագրութիւնը միշտ բաց է: Պատգամ ձգել՝ 1626 660 9443, գրել՝ stgregorysaturdayschool@gmail.com:

առաջնորդ Յովնան Սրբազան, շնորհակալութիւն յայտնեց հայ-ճաբոնական շարաբերութիւններու նուիրուած սոյն յիշատակելի միջոցառումի մասնակիցներուն:

Աւարտին՝ տեղի ունեցաւ հայ-ճաբոնական գինիի, ուտեստեղէնի եւ աղանդերներու հիւրասիրութիւն: Գ.Մ.

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
 «Մասիս» Շաբաթաթերթին
 Masis2@earthlink.net (626) 797-7680

Հ.Բ.Ը.Մ.ը 14,000 Շարժական Ջեռուցիչներ կը տրամադրէ Հայաստան Ապաստանած Արցախահայ Ընտանիքներու



Հինգ ամիսներ առաջ, Հայաստան ապաստանած արցախահայ ընտանիքներու սննդեղէնի կարիքներու ապահովումին համար նախաձեռնած իր ծաւալուն աշխատանքին իբր շարունակութիւն, գորս Հ.Բ.Ը.Մ.ը իրականացուցած էր Համաշխարհային կեդրոնական խոհանոց կազմակերպութեան հետ գործակցաբար, Միութիւնը իր մարդասիրական ճիգերը շարունակեց, «Ջերմ Ձմեռ» նախաձեռնութեամբ, 14,000 շարժական ջեռուցիչներ բաշխելով Հայաստան ապաստանած 60,000 արձախահայ ընտանիքներու, անոնց կեցութիւնը իրենց նոր բնակավայրերուն մէջ աւելի հանգստաւէտ եւ տանելի դարձնելու մտահոգութեամբ:

Հայաստանի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի մարդասիրական ծրագիրներու տնօրէն Ինէնա Մարգարեան կը նշէ, թէ ներկայիս, երբ արդէն սաստկաշունչ ձմեռը կոխած է յատկապէս մարզերուն մէջ, «մեր կարելին կ'ընենք օգնութեան ձեռք երկարելու արցախահայ համայնքին, մասամբ գոնէ թեթեւցնելու համար առօրեայ մտահոգութիւններու անոնց բեռը:»

«Երբ անցող Սեպտեմբերին մարդասիրական տաղանայր սկիզբ առաւ, մեր առաջնահերթ մտահոգութիւնն էր սննդեղէն ապահովելու համար համապատասխան տարողութեամբ նախաձեռնութիւն մը իրականացնել, պատրաստելով եւ տրամադրելով ամէնօրեայ տաք ճաշ եւ 28,000 ուստեղէնի սնտուկներ, Ազրայէյ-ճանի իրականացուցած ցեղային բնաջնջումի ոճիրին գոհ դարձած արցախահայ բռնի տեղահաններուն, որոնք աւելի քան ինը ամիսներ սովի եւ սննդազրկման ենթարկուած էին: Հիմա որ տեղահաններէն շատեր արդէն տարբեր բնակավայրերու մէջ տեղաւորուած են, ուր ընդհանապէս ջեռուցման միջոցները բաւարար չեն, տաքացման յաւելեալ միջոցներու ապահովումի անհարժեշտութիւնը շեշտակիօրէն զգալի է:»

Բաշխումի կեդրոնները կազմակերպուած են Հայաստանի տարբեր մարզերու տեղական զիւղապետութիւններու եւ շրջանային ղեկավարման կեդրոններու հետ գործակցութեամբ, ուր զիմորդները կրնան տրամադրելութեան կարգով ջեռուցիչներ ստանալ: Ստեփանակերտի բնակիչ 44-ամեայ Լիանա Իսրայիլեան, իր երախտագիտութիւնը կը յայտ-

նէր Հ.Բ.Ը.Մ.ին ըսելով՝ «Մեր ընտանիքը 12 անդամներէ կը բաղկանայ եւ մեր բնակավայրը չափազանց ցուրտ է: Այս ջեռուցիչները մեզի համար աւելի տանելի պիտի դարձնեն ձմռան այս եղանակը:»

Յունուար 17-ի եւ Փետրուար 2-ի միջեւ, 13 կամաւորներ Պուլկարիայէն, Ֆրանսայէն եւ Միացեալ Նահանգներէն, միացան Հ.Բ.Ը.Մ.-ի Armenians Come Together (ACT) Հայեր Ի Մի կու գան ծրագրին, որուն միջոցաւ սփռուքահայեր իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի մէջ մարդասիրական եւ կենցաղային բարեկարգման ծրագիրներու, ինչպիսին են սննդանիւթերու եւ ջեռուցիչներու բաշխումի նախաձեռնութիւնները:

Սթէյսի Թէրթերեան, Միացեալ Նահանգներէն, որ մասնակցած էր այս ծրագրին, իր տպաւորութիւնները կը բաժնէր ըսելով՝ «Ինձի համար հոգեկան մեծ բաւարարութիւն պատճառեց առիթը, զոր ունեցայ յարաբերելու այս ընտանիքներուն հետ, լսելու իրենց պատմութիւնները եւ փոխադարձաբար ապահովելու զիրենք, թէ իրենք առանձին չեն իրենց կեանքի տաղանայր այս հանգրուանին: Համոզուած եմ, որ մեր մասնակցութեամբ ոչ միայն ֆիզիքական կարիքներ կը մեղմենք, այլեւ մարդակային հաղորդակցութիւն եւ ջերմութիւն ու հոգածութիւն կը ցուցաբերենք անոնց հանդէպ:»

Շնորհիւ այն առատաձեռն նուիրատուութիւններուն որոնք կը տրամադրուին Հ.Բ.Ը.Մ.ի Համընդհանուր Մարդասիրական Օգնութեան ծրագրին, Միութիւնը կը յաջողի հասնիլ տաղանայրներու ընդառաջ գետնի վրայ զարգացող կարիքներուն, աւելին՝ կարելիութիւնը ունի մշակելու հոգատարութեան բազմակողմանի կայուն ծրագրեր, արցախահայերու մնացուն տեղաւորումը ապահովելու համար Հայաստանի մէջ: Ներկայիս իրականացուող ծրագիրներէն են ձրի բժշկական խնամք եւ հոգեբանական ճնշուածութեան հետեւանքներու արժեւորում, աշխատանքի ապահովում, չափահասներու ուսման կարելիութիւններ եւ կարողութիւններու մշակում, նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի Նայիրի ճամբարէն ներս պատանիներու եւ ծնողներու համար հանգստեան եւ ճամբարային քործունէութիւններու մշակուած յատուկ յայտագիր:

Երեւանի Մէջ Պարոյր Սեւակի 100-Ամեակին Նուիրուած Գրական Միջոցառում

Անցած 31 Յունուարի կէսօրէ ետք ժամը 4:00-էն սկսեալ, Երեւանի մէջ Լուսինէ Չաքարեանի անուան տուն-թանգարանի սրահէն ներս կը տիրէր արտասովոր եռուզեռ: Պարոյր Սեւակի 100-ամեակին նուիրուած միջոցառման ներկայ եղան հայրենի գրական հրապարակի հեղինակաւոր ու կարկառուն գրականագէտներու հոյն ու մշակութային գործիչներու ընտրանի մը, ստեղծելով տպաւորութիւն, որ ձեռնարկը առաւելաբար գրողներու համագումար մըն է:

Համագործակցութեամբ թանգարանի ժրաջան եւ նուիրեալ տնօրէնին՝ Դոկտ. Փրոֆ. Սուսաննա Դաւթեանին եւ նախաձեռնութեամբ ու կազմակերպութեամբ «Աղթամար» եւ «Մաղիկ» գրական թերթերու խմբագիր Յակոբ Տիւնեայեանի, վերջինին հրատարակած եւ Սեւակին նուիրուած Բացառիկ հատորին (72 էջ) շնորհահանդէս-գինեձօնին այս առիթով խօսքեր արտասանեցին գրականագէտներ Դոկտ. Արծրուն Աւագեան, Գագիկ Դաւթեան եւ Վրէժ Սարուխանեան՝ որոնք նաեւ բանաստեղծ եւ թարգմանիչ են, բանաստեղծուհի եւ գրող Դոկտ. Լիլիթ Սէյրանեան, Դոկտ. Վաչիկ Աւագեան, Եւրոմիութեան հայերու համագումարի նախագահ, գրող, հրապարակագիր եւ հրապարակախօս, ազգային հասարակական գործիչ Կարօ Յակոբեան, ՌԴ բնակիչ գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս Փրոֆ. Աշոտ Օհանեան, բանաստեղծ, գրող եւ համբաւաւոր գեղանկարիչ Արտիկ Քոչարեան, բանաստեղծուհի Գայլիանէ Աբրահամեան, գրող եւ հրապարակագիր Ռուբիկ Թովմասեան, հրապարակագիր եւ հրապարակախօս տեր Յակոբ Գեղարդավանքի քահանան եւ ուրիշներ:

Միջոցառման սկիզբը բացման խօսքով հանդէս եկաւ Լուսինէ Չաքարեանի անուան տուն-թանգարանի տնօրէն, Երեւանի Միութեամբ Հերացիի անուան պետական բժշկական համալսարանի փրկիստփայտութեան եւ ՆՈՒՆԵՍԲՕ-ի բիոնոտիկայի ամպլոնի, հայֆա, միջազգային ցանցի հայկական մասնաճիւղի վարիչ, Դոկտ. Փրոֆ. Սուսաննա Դաւթեան, որ հակիրճ անդրադառնալէ ետք ամերիկահայ բարերար եւ ազգային-մշակութային գործիչ Տոքթ. Ռաֆֆի Պալեանի ջանքերով կառուցուած թանգարանի հնգամեայ պատմութեան՝ աջակցութեամբ արեւելագէտ, բարերար, հիմնադիր նախագահ Քաշայթաղի բազմազաւակ ընտանիքներու օգնութեան հիմնադրամի Դոկտ. Փրոֆ. Գուրգէն Մելիքեանի, հրաւիրեց օրուան կազմակեր-



«Աղթամար» եւ «Ճաղիկ» թերթերու խմբագիր Յակոբ Տիւնեայեան՝ իր խօսքը արտասանած պահուն

պիչ Յակոբ Տիւնեայեանը, խօսք առնելու այս առիթով:

Տիւնեայեան ողջունելէ ետք ներկաները, հրաւիրեց իւրաքանչիւր ելոյթ ունեցող անձնաւորութիւն, որ ներկայացնէ ի՛ր ճանչցած Պարոյր Սեւակը: Ան շեշտեց, որ ամէն հայ ունի ի՛ր Պարոյր Սեւակը: Տիւնեայեան մասնաւորապէս ընդգծեց, որ Թումանեանէն, Խահապետեանէն, Չարենցէն ետք ամենամեծ պոէտը եւ երեւոյթը խորհրդահայ գրականութեան մէջ պիտի համարեն Պարոյր Սեւակը որպէս ոչ միայն հանճարեղ բանաստեղծ, այլ՝ ազգի առաջնորդ ու ղեկավար: Ան մասնաւորապէս ըսաւ, որ Պարոյր Սեւակ կը հանդիսանայ մտքի անհունաստեղծ տարածքներ նուաճող բանաստեղծ ու գրող, գուզահեռներ գծելով Սեւակի եւ մտքի հանճարեղ բանաստեղծ համարուող Վահան Թէքէեանի, որ Յակոբ Օշականի բնորոշմամբ առաջինն է մեր գրականութեան մէջ որ հայ քերթողութեան բերաւ մտքի խորութեան զգալարանքը, dimension-ը:

Յայտագրի ընթացքին տեղի ունեցան ասմունք, երգ եւ նուագ: Պարոյր Սեւակով գերյագեցած յայտագրի աւարտին Դոկտ. Սուսաննա Դաւթեան եւ Յակոբ Տիւնեայեան ներկաները հրաւիրեցին հիւրասիրութեան սեղանի շուրջ՝ կատարելու գինեձօն-շնորհահանդէսի արարողութիւնը Սեւակին նուիրուած Բացառիկ գիրքին:

Յիրաւի բարձրամակարդակ միջոցառում մը, որ ըստ կազմակերպիչին, Պարոյր Սեւակի 100-ամեակին նուիրուելիք (22 Ապրիլ 2024-ին, Երեւանի մէջ) պաշտօնական հանդիսութեան նախըզանքն է սոյն ձեռնարկը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ռուբէն Սեւակ (1885-1915)

Շարունակուած էջ 12-էն

լար մինակ դրամատիրութեան ետեւէն, փառասիրութեան ետեւէն»:

Շեշտուածօրէն նա՛եւ գիտնական բժիշկ մը, որուն հոգեւորաբար ոչ միայն հեռու էր միջազգային գոեհիկ դրամատիրութեան «Մեռնելու իրաւունքը»ին (բանաստեղծին արձակ էջերէն մէկը) անիրաւութիւնը յարգարեւու նուաճումէն, այլեւ ծանր ու անաւել կիրքերու անամէջ ազգայնականութենէ, որ այդ ժամանակներուն օրօրած են կուսակցամով գործիչները...

Ռուբէն Սեւակ այն բարոյակիրթիչ բանաստեղծն ու դաստիարակն է մեր հասարակութեան լայն զանգուածներուն, որոնցմէ շատերը դժբախտաբար զոհ գացին ապականած բարքերու եւ դրամին հասցուցած չարիքին: Իր «Թրուպատուրները» խորագիրով երկարաշունչ բանաստեղծութեան մէջ, ի տես եւ ի սէր հնօրեայ երգիչներու ինքնաբուխ արուեստին՝ իր հոգիին խորերէն հնչեցուց անդրագոյն ցան ու խորշանքը ընդդէմ այն մարդոց, որոնք խունկ կը ծխէին «Ռակի Հորթ»ին առջեւ..-

Վա՛խ, արծաթն արուեստն հանց կախաղան,

Յի՛ն, աստուածաբանակ դարերը մեռան,

Ու հիմա պիտի խնդացնեն, մութն արան

Թրուպատուրները...

Մե նք ենք, որ անփոյթ գրչով կը հեզանք

Այս ցեցն աշխարհի պսակները ցեցն...

Միւս կողմէ ուշագրաւ է Սեւակի «Կարմիր Գիրքը»ի (բանաստեղծին կենդանութեան հրատարակուած միակ ժողովածուն, 1910 թ.) երրորդ՝ «Մարգերգութիւն» պոէմը, մտալի իրականութեան առջեւ դառնութեամբ լեցունաւ քերթողին ուսման թիք մենախօսութիւնը, ուր կը բացուի տուեալ ժամանակաշրջանէն ընդարձակ համայնապատկեր մը, որ կը ներկայացնէ ռամիկ մարդու կեանքին ու տուայտանքներուն դրուագները՝ դրամիշխանութեան լուծին տակ: Սեւակ քայլ առ քայլ հետեւած է մարդու կեանքի հոլովոյթին՝ անոր ծնունդէն մինչեւ մահ: Ասոր համար է որ պոէմը բաժնուած է 3 մասի. - «Գիւղական Եկեղեցիին Մէջ - Ծնունդը», «Գիւղական Ճամբուն Վրայ - Կեանքը», «Գիւղական Գերեզմանատան Մէջ - Մահը»:

Սոյն երկարաշունչ պոէմը արարուած է կրքոտ ընդվզումով մը բարքերուն դէմ «քաղաքակիրթ» Արեւմուտքի: Պոէմը այսպէս կը սկսի.-

Անցեալ տարի էր: Յոգնած ապաքեմ,

Շատ քաղաքակիրթ այս Արեւմուտքեմ

Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքեմայ,

Աշխարհ՝ զործարան մ'ամբողջ,

անխնայ. Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ, Երջանկութիւնը՝ ծանձրալի միտրամ.

Ուր ամէն բոլորէն իր մանրակրկիտ

Մուրճի հարուածով կը գարնէ մտքիդ...

Սեւակի արձակ թէ չափածոյ երկերուն մէջ, սիրերգութիւնը ինքնակենսագրական շերտերով ճարտարապետուած ըլլալով հանդերձ, անոր իւրաքանչիւր հիւսկէնը, մէն մի նետարդը կազմուած է անարդարութեան ու եսամոլութեան չարիքին դէմ բռնու ըմբոստացումներով: Բարեկարգիչ, ուղղիչ ըմբոստացումներ են անոնք ապաքէն, որոնց ա՛յնքան կարիքն ունի մեր ազգը բոլոր ժամանակներուն:

Լօզանի մէջ իր աշխատած տարիներուն, ան ամուսնութիւն կնքելով գերման գնդապետ Ֆրանց Աբէլի շնորհալի դուստրին՝ Եանն Աբէլի հետ, կը բախտաւորուին Լեւոն (մահացած է կանուխ) եւ Շամիրամ գաւակներով:

Ռ. Սեւակի եղբորորդին՝ նիւսաբնակ պատմաբան եւ հրապարակագիր Յովհաննէս Չիլինկիրեան (1924-2021), իր երկերէն մէկուն մէջ հետեւեալը գրած է ի միջի այլոց. «24 Ապրիլ 1915-ին Ռուբէն Սեւակ ձերբակալելու ընթացքում մէջ չկար, քանի որ ան թրքական բանակին մէջ կը պաշտօնավարէր բժիշկ հարիւրապետի աստիճանով: ... Սեւակ Չանդրը մէջ կ'ունենայ եղբրական վախճան Դանիէլ Վարուժանի հետ՝ 26 Օգոստոս 1915-ին...: Ինչո՞ւ մենք՝ հայերս, մեր արժէքները գնահատել չենք գիտեր: Բայց ուրիշ ազգ մը կայ, որ շատ աւելի լաւ հասկցած էր Ռուբէն Սեւակի արժէքը - թուրքերը»:

Աւելի քան կէս դար իր ամուսնոյն՝ եղբրաբախտ Ռուբէն Սեւակի անթաւամ չիշատակներովը տառապազին ապրելէ վերջ, 28 Դեկտեմբեր 1967-ին իր աչքերը յաւիտեանայէս կը փակէր մեծ բանաստեղծին կինը՝ Եանն Ռուբէն Սեւակը, 77 տարեկանին, Նիսի մէջ: Յուզարկաւորութիւնը կատարուած է տեղի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցու մէջ:

Իր 101-ամեակին՝ մահէն տարի մը առաջ, Շամիրամ Ռուբէն Սեւակ իր երկար ապրելու «գաղտնիքին մասին» հետեւեալը պատասխանած էր իր այցելուներուն. «... Ինծի յաճախ կը հարցնեն՝ Շամիրամ՝, Ի՞նչ է չձերանալուդ գաղտնիքը: Պատասխանս միշտ կ'ըլլայ - Հայրս, հօրս Սիրայիս երգերը, կենսապայքարի երգերը. այլապէս ինչպէ՞ս դեռ կարող եմ ապրիլ հօրս աւելի քան եռապատիկ տարիքով: Բայց ես պիտի ապրի՛մ՝ հայրիկիս չապրած տարիները ապրելու համար, այդպէ՛ս վրէժ լուծելու...: Միայն Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի խօսքերը կրցան չորցնել աչքերս՝ ինծի ան հետեւեալը ըսելէ ետք. «Շամիրամ՝, մի՛ ար-

Աւարայրի ճակատամարտի Արտացոլումը

Շարունակուած էջ 11-էն

ինքնին արդէն մեղեդի լինի կարծես.

Օ~3 , ԴՈՒ ԲԱՐԵԿԱՍ ԱՅՐԱԾ ՍՐՏԵՐՈՒ,

ԽՕՍԱԿ ԳԻՇԵՐՈՅ, ՅՈՂԵԱԿ ՎԱՐԴԵՐՈՒ

ԵՐԳԵ ՊԼՊՈՒԼԻԿԴ. ԵՐԳԵ Ի ՄԱՐԴ,

ՉԱՍԱՎ ԲԱՁԲՆ ՅԱՅՈՅ, ԵՐԳԵ ՅՈՂՈՅՍ ՅԵՏ:

ԿԱՆՉԵ ՊԼՊՈՒԼԻԿ, ԿԱՆՉԵ ՅՈՂԱՅԵՆ,

ՈՐ ԵՐԿՆՈՅ Ի ՎԱՅՐ ՅԱՅԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ,

ՅԻՇԵ ԳՅԱՅԱՍԱՆ ՏՈՒՆ ԻՐ ՍԻՐԵԿԱՆ,

ՅԱՅԱՍԱՆ ՅԻՇԵ ՉԻՐ ԿԱՐՍԻՐ ՎԱՐԴԱՆ:

Ալիշանից յետոյ այս «ԿԱՐՄ-ՐԻԿ» բառ ... որակումը դարձել է խորհրդանիշ Վարդան Ջորավարին բնութագրելու համար, եւ նրան յաջողող բանաստեղծները նրա անուանը փակցրել են «ԿԱՐՄԻՐ» որակումը: Եթէ նկատեցիք, Ջիւաւու մօտ էլ կայ այդ մակդիրը:

Կարմիր Վարդանի անեղբ հայրենասիրութիւնը իր վառ արտայայտութիւնն է գտել

Մակար Եկմալեանի յաջորդատեղծագործութեան մէջ: «Լուեց», - նման կարծ առօտանուանում ունի երգահանի ամենայայտնի եռապատում գործը, որը, ահա հարիւր եւ աւելի տարի կատարուած է արուեստագէտների կողմից: Ռաֆայէլ Պատկանեանի չքնաղ բանաստեղծութիւնը այդքան հարադատօրէն երաժշտականացնելու հանձարը միայն Եկմալեանի նման երգահանը կարող էր ունենալ: «Լուեց» երգ-խմբերգը եռամասնի կառուցուածք ունի:

Առաջին մասում ինքն է՝ պոետը իր խոհերի հետ: Ազգին վիճակուած ծանր կացութիւնը, տարիների գրկանքներն ու անյուր տառապանքները հուսահատութեան գիրկն են նետել նրան: Երկրորդ մասում հերոսի հուսահատ վիճակը դառնում է վարակիչ, եւ համընդհանուր թախիծն ու տխրութիւնը փարատում է կարծես հերոսի խաբուսիկ լաւատեսութեան ազդե-

տասուէ շատ, ձեր հայրը իր նահատակութենէն վերջ յաւիտեանայէս պիտի ապրի»:

Ռուբէն Սեւակի քերթուածները՝ վեհ ու վսեմ իտէալներու հայրենաբուխ բոմբիւններ, Հայր միշտ զգաստ պահելու, պայքարի աւելն ներարկելու երգեր են՝ հայրենասիրական ու համամարդկային ապրումներ վերթեւոյ իրատես բանականութեամբ մը աւշայորդուն: Այդ երգերը՝ որ իրաւագրկեալ ժողովուրդներուն են ամէն բանէ առաջ, Սեւակ իր կատարած յաջող ախտաճանաչումէն ետք գանոնք յանձնած է արդարարութեան դատաստան, ինչպէս՝ «Դրամին Աղօթքը»ն, «Այս Դանակը»ն, «Փողոց Աւլոյը»ն եւ բազմաթիւ այլ քերթուածներ, որոնց թրթիռներուն խորքէն աւելի քան դար մը ետք, այսօր դեռ կը լսենք ամբուռքը այն Մեծ Ջարիքին, որ մարտահ-

ցութեան տակ: Թուում է թէ կէսօրուայ արեւն է օգնութեան հասնելու հային, կարծեօք՝ լոյսի շող է երեւում հորիզոնում: Չէ, ո՛չ, խաբուսիկ է այդ ամէնը: Ի՞նչ է բերելու գիշերը: Այստեղ արդէն Լուսինն է, վերջին հոյսը, որին էլ ստիպուած է դիմել հերոսը.

Ա՛հ, ՅՈՒՄՅ, ՓԱՅԼԵ ՏԵՐԱՎԵՍ ԼՈՒՍԻՆ

ԳՈՒՅԵ ԲՈ ՓԱՅԼԻՅ ՓԱՅԼ ՏԱՍ ԵՒ ՅԱՅԻՆ:

Լսե՛ց, լսեց տխրաղէմ Լուսինը եւ նա պատրաստ է աշխարհին փոխանցել հայերի կոչ-պատգամը, ուրեմն՝ շարունակիք բարեկամ:

ՊԱՏՍԵ ՇԱՏԵՐՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՅՈ,

ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԿՈՐԱՒ ՅԱՅ ԱՉԳԻ ՊԱՅՈ,

ԿԱՍ ԻՆՉ ՎԵՅ ՍԻՐՈՎ ՍԻՐՈՒՄ ԵՐ ՎԱՐԴԱՆ,

ՄԱՅՐԵՆԻ ՅՈՂՈ՛՝ ԱՇԽԱՐՀ ՅԱՅԱՍԱՆ:

... Ահա Վարդան Ջորավարի եւ Աւարայրի ճակատամարտի ոչ ամբողջական գրական-երաժշտական գործերի մօտաւոր ցանկը, որ ներկայացրինք ընթերցող լայն հասարակութեանը:

Վերջում, արժէ չիչել նաեւ, որ Վարդան Մամիկոնեանի կերպարը ուշադրութեան է արժանացել նաեւ կերպարուեստի գործիչների մօտ: Յիչենք քանդակագործ Երուանդ Քոչարի կերտած Վարդան Մամիկոնեանի արձանը Երեւանի ամենաբանուկ թաղերից մէկում:

Գեղարուեստական հիանալի երեւակայութեամբ Վարդան Մամիկոնեանի պատկերն են նկարել մեծանուն նկարիչներ Գրիգոր Խանճեանն ու Էդուարդ Իսաբէկեանը: Գրիգոր Խանճեանի «Վարդանանց պատերազմը» հանձարեղ պաննոն (Պաննոն, - մեծակտաւ իւղաներկ.- ՀԵՆ. Ա.), որի վրայ հեղինակն աշխատել է աւելի քան քսան տարի, ճակատամարտի առանձին դրուագներ, գունաւոր պատճենահանամբ մտել են 20-րդ դարի հայրենական եւ արտասահմանեան ճանաչուած գեղարուեստական հրատարակութիւնների մէջ:

րաւէր ու ձեռնոց է նետած Հայաստանին, բռնագրաւեալ Արցախին ու ընդհանրապէս հայ ժողովուրդին դէմ՝ «անիրատեսական խաղաղութիւն» գծելու փուլ խոստումներով...:

Ա՛լ բաւ է որ մեր ժողովուրդը կրեց ու կը շարունակէ դեռ կրել «խաղաղութեան երթալու» ինքնախաբականքներ թուրքին ու թրքարին ագրէի մահիկին տակ: Մեզ Ռուբէն Սեւակներ են պէտք, մեր ժողովուրդը առաջնորդող, սթափեցնող, զգաստութեան հրաւիրող, հեռատեսութիւն ու քաղաքական հոտառութիւն ունեցող հայրենանուէր առաքեալներ: Եւ արդարեւ, այստե՛ղ է բանաստեղծ Ռուբէն Սեւակի մեծութիւնը՝ որպէս մեծ մտաւորական մեր ժողովուրդին, իր չիշատակն ալ վառ պահելով սերուղէ սերունդ եւ դարէ դար:

«Աղթամար»

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ
ԱՐՄԻԿ ԳՕՃԱՊԱՊԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵԱՆԻ մահուան առթիւ Պաթոն Ռուբէն Տիկ. Ազատուհի Մովսէֆեան եւ Տէր եւ Տիկ. Սարգիս Մովսէֆեաններ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Աւօ Մարգարեանին եւ եղբոր Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գօճապապեաններուն:
Առ այդ \$250 կը նուիրեն «Մասիս»ին:

www.massisweekly.com
Weekly News Updates

Քենսըս Սիթի «Սիւփըր Պոլի» Ախոյեան

Կիրակի, Փետրուար 11-ին կայացած Ամերիկեան ֆուտբոլի աւարտական «Սիւփըր Պոլի» խաղին Քէնսըս Սիթիի «Չիֆս» խումբը յաջորդական երկրորդ տարին ըլլալով նուաճեց ախոյեանի գաւաթը:



Քէնսըս Սիթիի աւելացուած ժամանակին 25-22 արդիւնքով պարտութեան մատմեց Սան Ֆրանսիսքոյի խումբին:

Լաս Վեկասի մէջ տեղի ունեցած այս խաղը հեռատեսիլի վրայ դիտուած է 123.4 միլիոն հոգիներու կողմէ, դառնալով Ամերիկայի պատմութեան ամենէն աւելի դիտուած հեռատեսիլի հաղորդումը:

«Ինթեր» Յաղթեց «Ռոմային» Եւ 7 Կէտ Առաջ Է «Եուպենթուսէն»

Իտալիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին առաջատար «Ինթերը» հիւրընկալեց մայրաքաղաքային «Ռոմային» եւ առաւելութեան հասաւ 4:2 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը մասնակցեցաւ ամբողջ հանդիպումին:

«Ինթեր» (23 խաղ) 60 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ այժմ 7 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Եուպենթուսէն» (23 խաղ): «Ռոման» (24 խաղ) 5-րդն է՝ 38 կէտ:

«Լիվերփուլ» Յաղթեց Եւ Վերադարձաւ Առաջին Տեղ

Անգլիոյ Փրեմիեր լիգայի առաջնութեան 24-րդ հանգրուանին «Լիվերփուլը» ընդունեց «Պարնլիին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

«Լիվերփուլ» 54 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչըսթըր Սիթիէն», կէտ:

«Մանչըսթըր Եունայթըտ» Յաղթեց «Ասթոն Վիլյային»

Անգլիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտ» հիւրընկալեց «Ասթոն Վիլյային» եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

Հոլանտացի էրիկ Տեն Հակի գլխաւորած խումբին կողմէրը նշանակեցին դանիացի յարձակող Ռասմուս Հոյլունն ու Սկովտիացի կիսապաշտպան Սքոթ Մաքթոմինսը:

«Ասթոն Վիլյան» 46 կէտով 5-րդն է, «Մանչըսթըր Եունայթըտը» 6-րդ տեղն է՝ 41 կէտ:

«Մանչըսթըր Սիթին» Յաղթեց Երկինկ Հոլանտի Տուպլի Շնորհիւ

Անգլիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթին» ընդունեց Լիվերփուլ քաղաքի «Էվերթոնին» առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ նորվեկիացի յարձակող էրլինկ Հոլանտը:

«Պարսելունան» Հաւասարեցաւ «Կրանատայի» Հետ

Սպանիոյի առաջնութեան 24-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելունան» իր դաշտին վրայ մրցեցաւ «Կրանատայի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 3:3:

Սպանացի Չաւիի գլխաւորած խումբին տուպլի հեղինակ դարձաւ սպանացի յարձակող Լամին Եամալը: Աչքի ինկաւ նաեւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին:

«Պարսելունան» 51 կէտով երրորդն է եւ 5 կէտ ետ է երկրորդ տեղը գտնուող «ժիրոնյայէն»: Առաջատար «Ռեալը» ունի 61 կէտ: «Գրանատան» նախալերջինն է՝ 13 կէտ:

ՊՍԺ-ի Յաղթանակը

Ֆրանսայի առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Լիլին» եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով:

Խաղի 6-րդ վայրկեանին «Լիլ» նշանակեց առաջին կոլը, սակայն ՊՍԺ-ն փորթուկալացի յարձակող Կոնսալու Ռամոսի եւ ֆրանսացի յարձակող Ռանտալ ֆոլո Մոլանի կողմէրը շնորհիւ ՊՍԺ հասաւ առաւելութեան: Սեփական բերդը գրաւեց հիւրերու պրագիլցի պաշտպան Ալեքսանտրոն:

ՊՍԺ-ի ֆրանսայի յարձակող Կիլիան Մփայէն պահեստայիններու կազմին մէջ էր եւ դաշտ չմտաւ: Ան ոտնաթաթի վնասուածք ստացած էր:

Քոթ Տ'ազուրի Հաւաքականը Նուաճեց Ափրիկէի Գաւաթը



Ֆուտբոլի Քոթ Տ'ազուրի հաւաքականը երրորդ անգամ ըլլալով նուաճեց Ափրիկէի ազգերու գաւաթը:

Քոթ Տ'ազուրի մայրաքաղաք Ապիճանի մէջ տեղի ունեցած եզրափակիչին դաշտի տէրերը մրցեցան Նիճերիայի հաւաքականի հետ եւ յաղթանակի հասան 2:1 արդիւնքով:

38-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ Նիճերիայի եւ յունական ՊԱՕԿ-ի պաշտպան Ուիլիամս Թրոստ-Էկոնզը:

Քոթ Տ'ազուրի հաւաքականի կողմէրը նշանակեցին Սէուտական Արաբիոյ «Ալ Աշլիի» կիսապաշտպան Ֆրանք Քեսիէն եւ Տորթմունտի «Պորուսիայի» յարձակող Սեպաստիէն Ալերը:

Քաթարը Յաջորդական Երկրորդ Անգամ Նուաճեց Ասիոյ Գաւաթը



Քաթարի հաւաքականը երկրորդ յաջորդական անգամ նուաճեց Ասիոյ ֆուտբոլի գաւաթը:

Քաթարի մէջ կատարուող եզրափակիչ խաղին կազմակերպիչ երկրի խումբը մրցեցաւ Յորդանանի հաւաքականի հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Հեթ-թրիքի հեղինակ դարձաւ «Ալ Սատի» յարձակող Աքրամ Աֆիֆը, որ երեք կոլերն ալ նշանակեց 11-մեթրէն:

Ազգերու Լիկա. Հայաստանի Մրցակիցները

2024/25 UEFA NATIONS LEAGUE			
POT 1	POT 2	POT 3	POT 4
ROMANIA	AZERBAIJAN	NORTH MACEDONIA	BELARUS
SWEDEN	KOSOVO	SLOVAKIA	LITHUANIA / GIBRALTAR
ARMENIA	BULGARIA	NORTHERN IRELAND	ESTONIA
LUXEMBOURG	FAROE ISLANDS	CYPRUS	LATVIA

Փարիզի մէջ կայացաւ ֆուտբոլի Ազգերու Լիկայի խմբային փուլի վիճակահանութիւնը:

Հայաստանի հաւաքականը ընդգրկուած է C լիկայի չորրորդ խումբին մէջ եւ կը մրցի Ֆարերեան կղզիներու, Հիւսիսային Մակեթոնիայի եւ Լատվիայի հաւաքականներու հետ:

Խմբային փուլի հանդիպումները տեղի կ'ունենան Սեպտեմբեր-Նոյեմբերի ամիսներուն:

«Լիվըրքուսն» Յաղթեց «Պայրընին»

Գերմանիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին առաջատար «Լիվըրքուսն» ընդունեց ախոյեան Միւնխի «Պայրընին»:

Դաշտի տէրերը յաղթեցին 3:0 արդիւնքով:

«Լիվըքուսն» 55 կէտով ամրապնդուեցաւ առաջին տեղը: Միւնխի «Պայրընը» երկրորդն է՝ 50 կէտ: